




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓1299

1999



ԹՈՐԳՐԵՄՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՅ

ԵՒ ՆՇԱՆԱՅ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ

Յ. ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՏՓԻՒՍ


Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ,

Հ. ԷՆՁԻԱՃԵԱՆՑ.

1863—ՌԵԺԻ

ԼԵՈ

1299



Աստիճանային կարգի համար
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՅ ԵՒ ՆՇԱՆԱՅ

ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ ԲՐԻՍՏՈՍԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏՍ ՈՒՂԱՓՈՐ ԵՐԵՎԱՆԵՅ

ՊՐԻՆ

Ս. Դ. Ա. Բ. Ա. Ն.



ՏՓԻԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Դ. ՄԵԼԻՔՈՒՄԵԱՆԵՅ.

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆԵՅ,


1863—ՈՅԺԲ

**Напечатано съ разрѣшенія Вер-
ховнаго Патріарха и Кателикоса
всѣхъ Аріанъ Маттеоса.**

Іюня 1 дня 1863 г. Тифлисѣ.

Зр. 1302

41299-60



ՄԱՏԹԷՈՍ ծառայ Գրիստոսի
և անհասանելի կամօքն Աստուծոյ
Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս
ամենայն Հայոց ծայրագոյն Պատրի-
արք Համադգական նախամեծար Ա-
թոռոյ Արարատեան Առաքելա-
կան Մայր Եկեղեցւոյ **ԿԱԹՈՒՂԻ-
ԿԷ ԷԶԵՄԻԱՄԵՆԻ.**

Հարազատ Արդւոյ Մօրն լուսոյ կա-
թողիկէ սրբոյ Եջմիածնի և Առաքելական

Արարատեան Մեծի Աթոռոյս Յարգապա-
տիւն Պարոն Համբարձումայ Էնթիէճեանց
Քրիստոսեան սուրբ ողջունիւ եւ Հայրա-
կան օրհնութեամբ ծանուցանեմք:

Անհրաժեշտն պարտաւորութիւն ե-
կեղեցականս կոչման ստիպեալ էր զմեզ ձեռ-
նամուխ լինել 'ի դոյզն ինչ գրաւոր աշխա-
տութիւն անուանեալ Խորհրդածութիւն
Հորհայ եւնշանաց եւ Խորհրդոց Քրիստո-
սական Ս. Եկեղեցւոյ 'ի լեզու գրաբառ յԱ-
ռաջնորդութեան մերում 'ի Զմիւռնիա եւ
հրատարակեալ անդ տպագրութեամբ յա-
մի Տեառն 1842, եւ 'ի Կ. Պօլիս յաւուրս
Պատրիարքութեան մերոյ յամին 1847:

Սակայն բազումք 'ի բարեպաշտ ժո-
ղովրդ ենէ սիրելի Ազգիս Հայոց մնացին ան-
տեղեակս իմաստիցն պարունակելոց 'ի նը-
մա, ուստի ըստ Թախանձանաց ոմանց ըն-
թերցասէր անձանց, Թարգմանեալ զայն 'ի
բարբառ աշխարհիկ զիմաստս գրաբառին
պահելով նոյնութեամբ՝ հրատարակեալ էաք

դարձեալ 'ի Կ. Պօլիս յամի Տեառն 1848:

Բայց այժմ ապառեալ օրինակաց նոյն
Թարգմանութեան, կամք են մեր, զի տպագ-
րիս ջիւք ըստ խնդրանաց բնակելոց այսր 'ի
Տփլիս՝ հազար օրինակս յայնմանէ: Յուսա-
լով 'ի շնորհս Աստուածային, զի ոչ ա-
պարդիւն ինչ լիցի յԱղգի մերում այսօրինակ
գրութիւն, որ բացայայտս վարդապետէ ըզ-
կատարելութեանց մերս Քրիստոսականսուրբ
Եկեղեցւոյ, վկայութեամբ սրբազան տառից,
'ի փառս Աստուածային նախախնամութեան
շնորհելոց մեզ Քրիստոնէականս սուրբ ուխտի:

Մնամ վասն երջանկութեան սիրելի
Աղգիս Հայոց հանապազօր բարեմաղթու

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Համար 312.

'ի 6 Հոկտեմ. 1862.

'ի Տփլիս:

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏ արքայն Սողոմոն Առաջաց
ղրքին մէջ մարգարէական հոգւով կը գրէ, «Եւ
մաստութիւն չինեաց իւր տուն, եւ կանգնեաց
ինմա սինս եօթն»։ Ապաքէն խմաստութիւնն Աս-
տուծոյ է մշտնջենակից հօր բան Աստուած Յի-
սուս Քրիստոս, որ իրեն յաւիտենական ճշմար-
տութեանը վրայ հաւատով՝ յուսով՝ սիրով՝ եւ բա-
րեգործութեամբ հաստատեալ քրիստոնեայնիւր
իրեն կուսական եւ սրբարար մարմնոյն շնորհք-
ներուն հաղորդելով՝ ամէնքը ըրաւ իրեն անդամ.
եւ ինքն ալ իրաւամբ եւ աներկբայելի ճշմար-
տութեամբ եղաւ կենդանի եւ կենդանաբար զը-
լուխ բոլոր եկեղեցւոյն, որ է բազմութիւն ուղ-
ղափառ հաւատացելոց, թէ եւ ազգաւ՝ լեզուաւ՝
եւ տեղեաւ զանազան ալ ըլլան մէկտնկէ, որոնք
ունին ողջամիտ վարդապետութիւն եւ եկեղեցա-
կան աւանդութիւն ի հաստատութիւն սուրբ հա-

ւատոյ եւ յանայնչելիի պահպանութիւնն Քրիստոսական սուրբ կրօնի. եւ այս եկեղեցւոյն՝ որոյ զԵրեսն է Քրիստոս, էական յատկութիւնն է ըլլալ մի՝ սուրբ՝ կաթողիկէ՝ եւ առաքելական:

Մի է՝ քանդի եկեղեցին զանազան անդամներէ այսինքն ուղղափառ հաւատացեալներէ միացեալ կապւած է ճշմարիտ գլխոյն որ է Քրիստոս:

Սուրբ է՝ քանդի եկեղեցին այսինքն հաւատացեալները հաղորդուած են զերազոյն սրբութեան սրբազնասուրբ գլխոյն Քրիստոսի ուղղափառ դաւանութեամբ ճշմարիտ եւ սուրբ հաւատոյ, եւ առաքինական գործոց:

Կաթողիկէ է՝ որ ըսել է տիեզերական կամ ընդհանուր, քանդի եկեղեցին է լուսաւորուած եւ հաստատուած ողջամիտ աւետարանական վարդապետութեամբ, եւ տարածուած է բոլոր աշխարհքի մէջ, եւ քարոզուած ամէն ազգի եւ լնդուի մէջ:

Առաքելական է՝ քանդի եկեղեցին է անշարժ հաստատուած սրբազան Առաքելոց ճշմարիտ քարոզութեանցը վրայ, որ անմիջապէս Քրիստոսէ սորվեցան. եւ անոնց ժամանակէն անընդհատ յաջորդութեամբ մինչև մեզի հասած, եւ մինչդ աշխարհքիս վերջը անպակասելի: Աս լուծ ՚ի իմ

բացայայտ վարդապետութեամբ կաւանդէ մեզի Սուրբն Խոսրով (ի մեկն, ժամ. երես 78): «Եւ յի՞նչ է կաթուղիկէն, տինդերական: Զի ամենայն եկեղեցիք ուղղափառաց՝ որք ընդ տինդերս են, յմի են, մի Քրիստոս յամենայն եկեղեցիս է, որ ըստ Առաքելոցն հաւատոյ չինի, զոր եւ առաքելական կոչեմք: Որ զի թէ եւ բաժանին՝ ըստ տեղեաց, այլ ոչ եթէ ըստ ժողովրդոց, զի ի ծագաց մինչև ի ծագս երկրի՝ ուր եւ հասանի ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց՝ յիւր եկեղեցի է, եւ ոչ որոշէ զնա՝ ոչ աշխարհն եւ ոչ լեզուոյն օտարութիւնն. այլ ընդունի որչալէս մայր ի զիրկս սաստիկ սիրով»:

Այս քրիստոսահիմն եկեղեցիս ունի եւ եօթն սիւն, որ ընդհանուր եկեղեցւոյն կատարելութիւնները կը նշանակեն. որ եկեղեցւոյ եօթն խորհուրդներով եւ ուրիշ կրօնական արարողութիւններով կըլլան. վասն զի ուղղափառ հաւատքը եւ աստուածը իստութիւնը, քրիստոնէական մկրտութիւնը՝ եւ նշանաւ սուրբ խաչին սուրբ մեռոնաւ զրոշմիլը, քրիստոսական սպասարազին բաշխումը՝ եւ ասպաշխարութեամբ մեղաց թողութիւն ընդունիլը, օրինաւոր ամուսնութիւնը՝ եւ քահանայական ձեռնադրութիւնը,

հոգւոցն հանգուցելոց առ Քրիստոս յուղարկաւորութիւնը՝ եւ անմահ կեանքին ստացումը, երկնից արքայութեան ճանապարհը, եւ մեր լինելութեան սկիզբը եւ կատարածը, այս ամէնը եւ լսածնց վերաբերեալ քրիստոնէական կարգերը եւ օրհնութիւնները սուրբ եկեղեցին կը վարդապետէ մեզի եւ կուսուցանէ. անանկ որ՝ չի կայ ամենեւին հոգևոր գործ մը եւ բարեկարգութիւն մը, որ առանց եկեղեցւոյ ըլլայ եւ կատարուի:

Ահա այս զիտաւորութեամբ հեղինակեցինք սոյն խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց եւ խորհրդոց Քրիստոսական Ա. եկեղեցւոյ անուանեալ զիրքը աշխարհաբար լեզուաւ որ մեր բարեպաշտ Ազգային հասարակութիւնն ալ կարող լինին հասկանալ, թէ ինչ է Քրիստոսի եկեղեցին եւ նորա շնորհները, նշանները եւ խորհուրդները, եւ զիտել միանգամայն նոցա Աստուածային ներգործութիւնները եւ այն քրիստոնէական սլարտաւորութիւնները, որոնք արժանի կը հանդիսացուցանեն ճշմարիտ եւ ուղղափառ քրիստոնեայնները յաւիտենական փառաց արքայութեան:

Ուստի այս մեր դուզնաքեայ վաստակոց ար-

Դիւնքը նուիրելով ընթերցասէր օրհնեալ ժողովրդոց Ազգիս Հայոց, մնամ վասն բարօրութեան նոցա աղօթարար ի սրտէ

ՄԱՏԹԷՆՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Գ Լ ՈՒԽ Ա.

Ի՞նչ է եկեղեցին:

ԵԿԵՂԵՅԻ բառը յունարէն է. ու կը նշանակէ Էրեկլի բանի մը համար մէկ տեղ ժողովելու կոչում մը. անոր համար շատեր մտրդոց՝ մի և նոյն դիտաւորութեամբ մէկտեղ ժողովելիւ կըսվի եկեղեցի. ինչպէս, «Յալոժամ եկեղեցացոյց արքայ Սողոմոն զամենայն ծերս իտրայէլի» (Գ. Թադ. Ը. 1) :

Այս ազնիւ անունը խորհրդարար կը նշանակէ Աստուծոյ սեպհական ժողովուրդները, որոնք Աստուած պաշտու թեան յատուկ կրօնքով և կերպ կերպ ծիսական արարողութիւններով կը միաւորանին Աստուած գիտու թեան հաւատոյ մէջ՝ Աստ.

առաջոյ անժխտելի օրէնքները պահելով և
կատարելով :

Ինչպէս որ 'ի հնումն Իսրայէլեան ազգը
զԱստուած կը պաշտէին, ճանաչելով զա-
նիկայ Ամենակարող Արարիչ և Տէր՝ ամե-
նուն խնամակալ, ու միաբան կհաւատա-
յին թէ Մեսիայն Քրիստոս ամէնուն փր-
կութեանը համար աշխարհ պիտի գայ :

Բայց երբոր ատենը հասաւ, ու աշ-
խարհ եկաւ այն փրկիչը, ու իբն մեծա-
հրաշ և փրկարար խորհրդովք յայտնը-
վեցաւ, անոնք չար նախանձի և հպար-
տութեան մէջ յամառեալ՝ մտօք կուրա-
ցան, ու չի ճանչցան զանիկայ, ու փրկու-
թեան սքանչելի լոյսը չընդունեցին իրենց
հոգւոյն մէջ, և անոր համար զըկուեցան
Աւետարանական երանութ իւններէն, ու օ-
տարացան Աստուծմէ և արքայութեան
ժառքէն : «Ուստի՝ ինչ որ կկենդրէր Իսրա-
յէլ այն բոնին չի հասաւ» : (ՀռովԺԱ. 7) :

Եւ անոնց այս ողբալի կուրութեանը համար, և անօրէն ընթացքներնուն համար Նսայի մարդարէն յառաջուց խօսած է. «Խաղաղութեան ճանրան չի ճանչցան, և անոնց ճանրաններուն մէջ իրաւունք չկայ. որովհետեւ ծած են անոնց շաւիղները, ու չի ճանչցան խաղաղութիւնը, անոր համար իրաւունքը վերցաւ անոնցմէ. ու արդարութիւնը չի պիտի գայ անոնց. երբոր լոյսի կ'սպասէին, խաւար եղաւ անոնց. ու երբոր անոր կը յուսային, մութը պըտըտեցան» (ՄԹ. 8) :

Անոնց չարաչար մոլորութեանը և կամակոր կուրութեանը վրայ Յոբ ալ մարգարէաբար ըսած է. «Յերեկը մութի պիտի իյնան, ու կէս օրուան ատենը կուրակուրաւով պիտի քալեն՝ իբր թէ զիշեր է» (Ե. 14.) :

Բայց այս նորին մէջ՝ հաւատացելոց մէն ազգերը միախորհուրդ կամօք ըն-

դունեցին յաւիտենական՝ ճշմարտութիւն
ները ու քրիստոնէական սրբազան կրօնքը,
և միաբան կը հաւատան ու կը խոստովա-
նին. թէ Քրիստոս կենդանի և ճշմարիտ
Աստուծոյ որդին է. ինչպէս, «Դու ես Քրի-
ստոս որդի Աստուծոյ կենդանւոյ (Մատ.
ԺԶ. 16) : «Մեք հաւատացաք և ծանեաք,
եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ»
(Յօհ Զ. 70) :

Քրիստոնեաներուն այս ուղղափառ դա-
ւանութեանը՝ Աստուծային երնութեանց
դուռն է զանազան շնորհքներու ժառան-
գաւորութիւն, և Քրիստոսի սուրբ եկեղե-
ցւոյն անշարժելի հիմն է : «Ի վերայ այդը
վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատ. ԺԶ. 18) :

Աստի Քրիստոնից ժողովը իրաւամբ
կ'ըսուի և է եկեղեցի Քրիստոսի. որով
հետեւ ամեն հոգեւոր բարիքները, և քը-
րիստի խորհուրդներուն սրբաբար շն-
որհքները ընդունեց, և արքայութեան

փառքին հասցնող առաքինական գործ-
քերը կը ցույնէ իր վրայ : Որ ասոնցմէ օ-
տարացաւ հեռացաւ հրէից ժողովը՝ իր
կամապաշտու թեամբը ու նախանձովը . և
այս պատճառաւ Յիսուս զանոնք յանդի-
մանէ ու համար . և Քրիստոնէից յոյսը
հաստատելու համար . «Վասն այսորիկ ա-
սեմ ձեզ, զի բարձրի 'ի ձէնջ արքայու-
թիւնն Աստուծոյ . և ասցի ազգի որ առ-
նիցէ զպտուղ նորա» (Մատ. ԻԱ. 43) :

Եկեղեցին՝ Քրիստոսի խորհրդական
մարմինն է՝ հաւատով և սիրով անոր հետ
միացած . և ամէն մէկ հաւատացեալք՝ նոյն
մարմնոյն մէյմէկ անդամներն են . որոնք՝
Քրիստոսի զերբնական պարգեւներէն հո-
գեւորական աճում և զօրութիւն կ'ըն-
դունին . որ ինքն է ընդ հանրական և ինք-
նիշխան գլուխ իր Եկեղեցւոյն վրայ . ինչ-
պէս որ մարդու մարմնոյն մէջ ամէն կեն-
դանական և զգայական ներգործութիւն-

ներուն սկիզբն գլուխն է, ասանկ ալ Քրիստոսի խորհրդական մարմինը՝ այսինքն Նկեղեցին՝ շնորհաց կենդանարար զօրութիւնները իր գերամբարձ գլուխէն այսինքն Քրիստոսէն կ'առնէ կատարելապէս. ինչպէս «Եւ զնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իւրիք Նկեղեցւոյ, որ է մարմին նորա, և լըրումն՝ որ զամենայն յամենայնի շնու» (Եփես. Ա. 22) :

Նրկու կերպով գլուխ եկեղեցւոյ կը ճանչնանք զՔրիստոս, մէկ մը որ իր Նկեղեցիին վրայ, այսինքն բոլոր հաւատացեալներուն վրայ իշխելու և տիրելու ամէն կերպով իրաւունք ունի. որովհետեւ զամէնքն ու իր վերկարար արիւնովը փրկեց մեղքի դատապարտութենէն, ու իր անսպարտ մահուամբը ապրեցուց. ու դժոխքին իշխանութենէն ազատեց, մանաւանդ իր կամաւոր չարչարանաց արդիւնքներովը զամէնքը հաղորդ ըրաւ իր Աստուածային

փառքին : Տուաւ ինձ ամենայն իշխանու-
թիւն յերկինս և յերկրի (Մատ. ԻԸ. 18) :

«Քրիստոս սիրեաց զեկեղեցի. և զանձն
իւր մատնեաց վասն նորա, զի զնա սրբես-
ցէ սրբութեամբ աւազանին բանիւ, զի
կացուսցէ ինքն իւր յանդիման փառա-
ւոր զեկեղեցի» (Եփես. Ե. 25. 26. 27) :

Երկրորդ՝ որովհետեւ Քրիստոս Եկեղե-
ցիին հետ միացեալ է կենդանացուցիչ շը-
նորհքներով և յատուկ սիրով. և մինչե-
լի կատարած աշխարհի և յաւիտեան չի
զատուիր անկէ. այլ իբրեւ գլուխ՝ իր բա-
րոյական մարմինը այսինքն Եկեղեցին կը
խնամէ կենդանական ներգործութիւննե-
րով. փրկութեան ճամբուն մէջ առաջ-
նորդելով անոր, լուսաւորելով զանիկայ Ա-
ւետարանին ճշմարտութիւններով, զօրա-
ցնելով զանիկայ առաքինական գործքե-
րուն մէջ, որ երկնից արքայութեան փառ-
քին հասցնէ զանիկայ : (Մատ. ԻԸ. 20) :

«Եւ թէ ոչ հեռի իսկ է յիւրաքան-
չիւր ումեքէ՝ ՚ի մէնջ, զի նովաւ կեամք և
շարժիմք և եմք» (Գործք. Ժէ. 28) :

Ահա ասոնցմով յայտնի կ'երևի, որ
Քրիստոս Եկեղեցիին ընդհանրական գը-
լուխն է, ինքնիշխան հրամայող, ծայրագոյն
իշխող, ներքին կառավարիչ, և արդար դա-
տաւոր ամենեցուն. իսկ առաքեալները՝ և
անո՛ց օրինաւոր յաջորդները՝ կ'ըսուին
փոխանորդ Քրիստոսի կամ անոր պաշտօ-
նեաներ, նաև Քրիստոսի Եկեղեցւոյն՝ աե-
սանելի հոգարարձուներ. և ահա ասոնց կը
վերաբերին այս վկայութիւնները : «Որ ըն-
դունի զձեզ՝ զիս ընդունի Մատ Ժ. 40) :

«Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ
իրրև զպաշտօնեայս Քրիստոսի և հազա-
րապետս խորհրդոցն Աստուածային» (Ա.
Կորնթ. Դ. 1) :

«Արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աստու-
ծոյ. վերակացու լինել՝ մի՛ իրլև ահամայ,

այլ կամաւ ըստ Աստուծոյ (Պետ. Ա. կաթու. Ե. 2) :

Դարձեալ Եկեղեցին՝ ըստ ողջամիտ Աստուածաւանից այսպէս կ'սահմանուի :

«Եկեղեցին՝ հաւատացելոյ ընտրեալ ժողովն է՝ մկրտութեան սրբազան կնիքը ունեցող. և Աւետարանին ճշմարտութեան վրայ մէկ հաւատքով միաբանած. և Քրիստոսի արդարացուցիչ խորհուրդն ընդհանրեցող. և Աստուծային պաշտամունքներու մէջ միաբան. և աներեւոյթ խնամքով միշտ կրպաշողանուի իր կենդանացուցիչ գլուխէն՝ այսինքն Քրիստոսէն. և տեսանելի այցելութեամբ կ'առաջարկէ սրբազան Առաքելոց օրինաւոր յաջորդներէն. այսինքն եպիսկոպոսներէն» :

«Ժողովը ըստ եցաւ. վասն զի Եկեղեցին՝ բոլոր աշխարհ տարածուած հաւատացեալ մարդոց միաբանութիւնն է, որոնք քրիս-

տոնէական ճշմարտութեանց մէջ անբա-
ժան են սուրբ կրօնքով :

«Մկրտութեան սրբազան կնիքը ունե-
ցող՝ ըսելով՝ քրիստոնէական եկեղեցիէ
դուրս կը մնան հրէաները և մօլորեալ հե-
թանոսները, որոնք միշտ դատապարտու-
թեան մէջ են :

«Աւետարանական ճշմարտութեանց վը-
րայ մէկ հաւատքով միաբանած՝ ըսինք՝
վասն զի կը մերժէ եկեղեցին հերիտիկոս-
ները և Քրիստոսի ճշմարտութիւնները
ուրացողները՝ ինչպէս են Արիոս, Եւնոմիոս,
Աղեմադէս, և Գայիոն, որոնք՝ «Արարած է
(ըսին) որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոսը,
և ժամանակէ մը ետքը՝ ոչնչէն կամ ու-
րիշ էութենէ ստեղծուած, ու չէ թէ Հօր
Աստուծմէ անժամանակաբար ծնած յա-
ւիտենական որդի է» : Ասոնց կարգն էՄ ա-
կեդոն ամբարիշտն ալ, որ ուրացաւ Հոգ-
ւոյն սրբոյ հաւասար Աստուծոյ ըլլալը,

և Հօր և Որդւոյ փառակից ըլլալը : Ասոնց պէս են Նեոտոր ու Նւտիքէս, և ուրիշ չարափառներ, որոնք աւետարանական բացառապէս ճշմարտութեանց դէմ մուր խօսքեր խօսելու համարձակեցան. անոր համար սղղափառ սրբազան Հայրապետները ընդհանրական ժողովքներով նշովեցին այս հայհոյիչները, և Նկեղեցւոյ անդամներէն զատեցին :

«Քրիստոսի արդարացուցիչ խորհուրդներուն հաղորդակից» ըսելով՝ կը հասկըցվի, թէ Նկեղեցւոյ անդամներէն բնաւ մէկը չի զբուսիր սրբարար խորհուրդներուն մասնակցութենէն. բայց միայն չորութեանց մէջ յամառեալ՝ և յանցանքի մը համար իրաւամբ բանադրեալ մարդիկ հաղորդակից չեն, և Նկեղեցւոյ սրբարար խորհուրդները ընդունելու՝ և շնորհքները վայելելու համարձակութիւն չունին :

«Աստուածային պտշտամունքներու մէջ

միաբան՝ ըսվելով՝ կ'իմացուի Եկեղեցւոյ
վախճանական գործը, որով Եկեղեցին ե-
րանու թեան պատէր կ'ընդունի Աստուծոյ՝
որովհետեւ գիտէ Եկեղեցին ու կրճանչնայ
Աստուծոյ գերազանց մեծութիւնը, անկէ
եկած գերմնական շնորհքները, ու պատ-
րաստված երանաւէտ փառքր՝ անոր հա-
մար միշտ Աստուծոյ երկրպագելու պաշ-
տօնէն ետ չի մնար, ու անոր ամենաբարի
կամքին ծառայելու մէջ առաջ երթալու
կը ջանայ :

«Աներեւոյթ խնամքով միշտ կը պաշտ-
պանվի իր կենդանացուցիչ գլուխէն՝ այ-
սինքն Քրիստոսէն՝ ըսվեցաւ, վասն զի Ե-
կեղեցին Քրիստոսի բարոյական մարմինն է
հաստատով և սիրով անոր հետ միացած՝
և ինքն Քրիստոս՝ Եկեղեցիին գլուխն է,
որ ներքին բարեբարութեամբ ամէնքը կը
սրբացրնէ ու կը զօրացնէ :

Իսկ Եկեղեցիին արտաքին կառավա-

ըուծիւնր ու այցելուծիւնը յանձնեց իր Առաքեալներուն, և անոնց յաջորդ եպիսկոպոսներուն, և երէցներուն. ասոր համար ըսուեցաւ էն վերջը, թէ՛ ճեսանելի այցելուծիւմբ կը կառավարվի սրբազան Առաքելոց օրինաւոր յաջորդներէն, այսինքն՝ Եպիսկոպոսներէն: Գնաղէք այսուհետեւ աշակերտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ, ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն զոր ինչ պատուիրելի ձեզ (Մատ. ԻԸ. 19. 20):

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ, իրբեւերիցակից՝ և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հազորդ. արածեցէ՛ք որ ՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ, (Պետ. Ա. Կաթ. Ե. 1):

Գ Լ ՈՒ Խ Բ.

Ե՛րբ եղաւ Եկեղեցիին սկիզբը :

Աստուած իր Եկեղեցին աշխարհքին
սկիզբէն հաստատեց՝ ներքին և սուրբ
ազդեցութեամբ զամէն մարդ Աստուած-
գիտութեան և Աստուածապաշտութեան
հրաւիրելով, ու ճշմարտութիւնը ճանչ-
նալու: և իր կամքը կատարելու համար
պէտք եղած բաները ամէնուն յայտնելով,
նահապետներէն սկսած մինչև Մարգա-
րէներուն վերջը՝ Աստուածապաշտութեան
հարկաւոր գիտելիքները տարածելով:

Ձէ թէ միայն մէկ հոգիի մը յայտնե-
լով Աստուածապաշտութեան բոլոր խոր-
հուրդները, որ Քրիստոսի մարդեղութեան
շնորհքովը կատարելութիւն պիտի գտնային,
այլ ատեն ատեն այլ և այլ մարդոց զա-

հազան բաներ կ'իմացնէր, զորօրինակ՝ բան մը
 նախահօր Ադամին կը յայտնէր, ուրիշ բան
 մը Նոյին ընել կուտար, Աստուած պաշ-
 տու թեան տնտեսութիւն մը Աբրահամին
 կը յանձնէր, ուրիշ յայտնութիւն մը Մով-
 սէսին ցցուց՝ ամէն մէկ Նահապետներուն
 ու Մարգարէներուն մասնաւոր ազդե-
 ցութիւններ ընելով, որոնց ամէնն ալ Աստ-
 ւածային տնօրէնութեան և մարդասի-
 րութեան մի ևնոյն խորհուրդին կ'նայէին :

«Բազում մասամբք և բազում օրինակօք
 կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր
 մարդարէիւք» (Եբր. Ա. 1) :

Ուստի Աստուած պաշտութեան խոր-
 հուրդը ամէն մէկ դար անպակաս ծաղկե-
 լու վրայ էր. թէպէտ երբեմն կռապաշ-
 տութեան խաւար տգիտութիւնը կ'իմա-
 ցնէր, բայց Աստուած պաշտութեան պայ-
 ծառ լոյսը Աստուծոյ Նկեղեցիէն ամէն ա-
 տեն անպակաս ըլլալով, կը փարտտէր սնո-

տի պաշտամունքներուն խաւարը՝ երեւան
հանելով կամ խայտառակելով հեթանոս
սովեան ծուռ կործինները :

Ինչպէս որ եղիտ մագարէն Ճշմարիտ
Աստուծոյ նախնիքովը վաւաստ՝ խայտա-
ռաւեց Աքայաբ թագաւորը, որ Բահաղու
կուռքը կը պաշտէր, ու իր սուտ մարդա-
րէ ներովը այն կռամուրթեան կ'յօժարե-
ցընէր Իսրայէլի ժողովուրդներէն շատերը :

Բայց Աստուծոյ մարդարէին ջերմե-
ւանդ աղօթքովը՝ ամէնուն աչքին առջին
յայտ ի եղաւ Ճշմարիտ Աստուծոյ ամե-
նակարսղ զօրութիւնը. ուռտի բոլոր ժո-
ղովուրդ երեսնուն վրայ զետինը իյնալով
բարձր ձայնով ասանկ կը խոստովանէին :
«Արդարեւ տէր՝ նա է Աստուած. տէր նա է
Աստուած» (Թագ. ԺԷ. 39) : Ահա այժմ տեղ ճշ-
մարիտ Աստուած պաշտութեան լոյսը ծա-
ղեց, և կռապաշտութեան խաւարը փարա-
տեց : «Մարեաց ՚ի խաւարի լոյս ու զղոց. ողոր-

մած՝ գթած՝ և արդւր է տէր» (Սաղ. ՃԺԱ. 4):

Այս եկեղեցին առաջուց ՚ի վեր կ'աշտապանվէր Աստուածային այցելութեամբ և կերպ կերպ խնամքներով. անաստուածութեան վիճակէն ազատ մնալու համար. ըստ այնմ, թէ՛ «Յիշեա՛ զԺողովուրդքո՛ւ, զոր ստացար ՚ի սկզբանէ՛, փրկեցեր ըզ՝ վիճակ ժառանգութեան քո» (Սաղ. ՀԳ. 2):

664. Այս վկայութիւնով Աստուծոյ եկեղեցւոյն մշանջնաւորութիւնը կը հաստատուի. ինչպէս որ Եղնիկ Կողբացին ասանկ կը բացատրէ՝ ըսելով, «Եկեղեցի Աստուծոյ ՚ի սկզբանէ աշխարհի էր, զորմէ և Դաւիթ ՚ի Հոգւոյն սրբոյ ուսեալ մատուցանէր զաղօթս, թէ յիշեա՛ զեկեղեցի քո՛ւ, զոր ստացար ՚ի սկզբանէ» (Գիրք. Գ. 229): Այս եկեղեցին կ'ըսվի հին եկեղեցի, որոյ անդամները խորայնացւոց աղպն էր. որոնք թէպէտ ունէին Աստուածապաշտութիւն՝ զրական կամ Մովսիսական օրէն-

քէն, բայց անկտտ որ էին Աստուածդի-
տութեան ծանօթութիւններու մէջ :

Իսկ Քրիստոսական եկեղեցին՝ կ'ըսվի
նոր եկեղեցի. որոյ անդամները՝ Քրիստո-
սի մարդեղութեանը և փրկարար տնօրէ-
նութեանը հաւատացող, և յանուն ամե-
նասուրբ Երրորդութեան մկրտեալներն են.
որով ունին այն կատարեալ Աստուածդիտու-
թիւնը՝ ի հայրն ամենապաշտօն, ի յՈրդին մի-
ածին, և ի սուրբ Հոգին յանեղն և ի կա-
տարեալն : Եւ Աւետարանական ճշմարտու-
թեան լուսաւոր ծանապարհին կատարեալ
ուսմանը հետևելով, սրբազան Աւետա-
րանիչներուն և Առաքեալներուն քարոզած
Քրիստոնէական ուղիովիտ վարդապետու-
թիւնը կ'ընդունին. ըստ այնմ, «Զոր մեքն
քարոզեմք և խրատեմք զամենայն մարդ,
և ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն
հոգեւոր իմաստութեամբ, զի կացուսցուք
զամենայն մարդ կատարեալ ի Քրիստոս
Յիսուս» (Կողոս. Ա. 28) :

Գ Լ ՈՒ Խ Գ

Ինչով կը զանազանի հին Նկեղեցին

Նոր Նկեղեցիէն :

Հին Նկեղեցին այսինքն հրէից ազգը
այս նոր Նկեղեցիին հետ՝ այսինքն Գրիս-
տոնէից հետ բազմատեւ ըլլանք, շատ
պակասութիւններ կը գտնանք հին Նկե-
ղեցիին վրայ :

Մասն աւոր համար, որ Մեսիայի
մեր կենարար Յիսուսին դաւաճանը առ-
պագայ շնորհները և փառքերը վայե-
լելու՝ պատրաստեալ և սկսեալ Նկեղե-
ցի մը կրնանք կոչել զանիկայ. որ այն
խոստացեալ Մեսիայն երբոր աշխարհք ե-

կաւ, իր Աստուածովայեւ Հրաշագործութիւններովը թէպէտ ամէնուն յայանի կը ցուցանէր, թէ ինքն էր աշխարհիս Փրկիչը Յիսուս. մանաւանդ որ, մարդաբէներուն խօսքերն ալ կը վկայէին, թէ այն է Քրիստոսը, որ խրկուեցաւ հրէից և հեթանոսաց Փրկիչ և կեցուցիչ. բայց հրէաները անոր շնորհքները ու փառքերը անարդելով, կամաւոր կուրուծեամբ մտաց սկսան նախանձիլ Յիսուսին վրայ ու առեւ զանիկայ. անանկ որ՝ անիրաւ զորապարտութիւններով խաչի մահուան ալ դատապարտել համարձակեցան. որով բոլորովին զրկուեցան նոյն փրկարար շնորհքէն, և անոր Աստուածութեան ամենացանկալի փառքէն : «Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան» (Յօհ. Ա. 11) :

«Այլ իարայել երթայր զհետ օրինացն արդարութեան, և յօրէնս արդարութեան ոչ ժամանեաց» (Հռով. Թ. 31) :

Իսկ այս քրիստոսական նոր սուրբ եկեղեցիին համար իրաւամբ կրնանք ըսել, թէ՛ այս անանկ եկեղեցի մըն է, որ փրկեալ թեան խորհուրդներով կատարեալ է, և Հօր Աստուծոյ որդեգիր ըլլալու շնորհքը ստալած և Աստուածաժողովեան երանական փառքին ժառանգ եղած է :

Ուրիշետե Գրիստոսական սուրբ եկեղեցին կը խոստովանի ու կը հաւատայ՝ կենարար Յիսուսի փրկարար մարդկողութեանը, և տնոր Աստուածադործ հրաշքներուն, և շնորհասփիւռ ճշմարիտ վարդապետութիւններուն, ու կը յուսայ՝ որ մեղքերուն թողութիւն կը դանայ 'ի ձեռն զղջման՝ արդեամբ կամաւոր մահուան և անպարտ խաչին Յիսուսի փրկչին մերոյ : Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա. (Յովհ. Ա.

22) : « Հեթանոսք որք ոչ երթային զհետ
արդարութեան, հասին արդարութեան.
այնմ արդարութեան՝ որ ՚ի հաւատոց ան-
տի» (Հռով. Թ. 30) :

Երկրորդ՝ հին Նիկիեցին՝ Քրիստոսի
սպառնալիկարար խորհուրդներուն մի-
այն օրինակները ու ձեւակերպութիւնները
կը տեսնար. և այն ալ՝ Աստուծոյ ծառա-
ներուն՝ այսինքն մարգարէներուն և նա-
հապետներուն ձեռքովը զանազան կերպով
յայտնվելով, երբեմն օրինակաւ մը, և
երբեմն մարգարէական խօսքով մը. զոր
օրինակ՝ իր կուսական ծնունդը օրինակով,
մը երեցուց Գանիէլ մարգարէին ձեռքով
՚ի վէմն հատեալ ՚ի լեռնէն առանց ձե-
ռին» (Գան. Բ. 45) : Եւ Եսայի մարգա-
րէին ձեռքովը յայտնի խօսքով. «Ահա՛
կոյս յղասցի և ծնցի որդի» (Է 14) :

Իր խաչվելուն խորհուրդը յայտնեց
Հայր Աբրահամին՝ երբոր Խաահակը զոհ

ընելու հրաման բրաւ. որ անոր տեղը սաբնկ ծառէն վար կախուած խոյր երեւցուց. (Ծնն. ԻԲ. 13) : «Արքա համ ցանկացաւ տեսանել զօրն իմ (այսինքն զօրինակն իմ), ետես և ուրախ եղև» (Յօհ. Ը. 56) :

Եւ այս բանը՝ դարձեալ Եսայի մարգարէին բերնովը ալ աւելի յստակ քարոզվեցաւ թէ՛ «Իբրև զոչխար ՚ի սպանդ վարեցաւ. և իբրև զորոջ առաջի կտրչի անմուռնչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր» (ԾԳ. 7) :

Ահա՛ ասոնց ամէնը մարգարէներուն ու նահապետներուն ձեռքովը կը գուշակվէր հին Եկեղեցւոյ մէջ, բայց այն օրինակներէն և այն գուշակութիւններէն Յիսուսի փրկագործ խորհուրդներուն շնորհքները և փառքը արդեամբ չէին երևար : Բայց Քրիստոսի այս նոր սուրբ Եկեղեցւոյն մէջ՝ յայտնի տեսնվեցաւ փրկութեան այս ամէն խորհուրդները. չէ

Թէ օրինակներով, այլ Աստուծային յայտ-
նի հրաշքներով՝ և շնորհքներով՝ և յա-
ւիտենական երանութիւն խոստանալով
ճշմարտապէս. չէ՞ Թէ մասնաւոր կամ
մութ ծանօթութեամբ մը, այլ լեցուն՝
անպակաս՝ և լուսաւոր յայտնութեամբ.
չէ՞ Թէ մարգարէներուն ու նահապետ-
ներուն ձեռքովը, այլ մեր կենարար Յի-
սուսին ձեռքով, որ շնորհաց տէրն, և
ճշմարտութեան հեղինակն է. «Բազում
մասամբք և բազում օրինակօք կանխաւ
խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մար-
գարէիւք. ՚ի վախճան աւուրցս այսօցիկ
խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եղ ժա-
ռանդ ամենայնի, որով և զյաւիտեանս
արար» (Երբ. Ա. 1) : «Բայց ձեր երանի է
աչաց՝ զի տեսանեն, և ականջաց ձերօց՝
զի լսեն. ամէն ասեմ ձեզ, զի բազում մար-
գարէք և արգարք ցանկացան տեսանիլ՝

զոր անսանէքդ, և ոչ տեսին և լսել՝ զոր
լուայքդ, և ոչ լուան» (Մատ. ԺԳ. 16) :

Երբորդ՝ հին եկեղեցին՝ թէ՛ սկզբնա-
կան մեղքէն, և թէ՛ ներգործական մեղ-
քէն ներքին ճշմարիտ սրբութեամբ չէր
կրնար մաքրուիլ. զի թէպէտ մեղքի հա-
մար զոհեր ու ողջակէզներու պատարագ-
ներ կը մատուցանէին, բայց այն պատա-
րագները անոնց մեղքերը քաւելու չափ
հաճելի չեղան Աստուծոյ. այլ միայն բա-
րեպաշտական գործք մը և Աստուծապաշ-
տական ցոյց մը կը սեպւէր. մանաւանդ որ,
այն զոհերով կը նշանակվէր Քրիստոսի
ճշմարիտ պատարագին օրինակը, որ ճշ-
մարտապէս պատարագվեցաւ մեր մեղքե-
րուն քաւութեանը համար՝ իրաչին փր-
կաւէտ սեղանին վրայ. ինչպէս որ եղաւ
Մովսէսին ատենը. (Ղեւտ. Թ. 24) . Գեղէ-
օնին ատենը. (Գատ. 2. 21) : Եւ Եղիային
ատենը. (Թադ. ԺԸ. 38) : Այս ամէն մա-

տուցված պատարագները զօրութիւն չունէին մեղքերը քաւելու, և ներքին սրբութեան ստացումը տալու: Ընչպէս որ գրուած է. «Ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար. լսելիս հաստատեցիր ինձ. զողջակէզս՝ և զվասն մեղացն ոչ խնդրեցեր» (Սաղմ. ԼԹ. 7): «Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն և ցլուց բռնալ զմեղս» (Եբր. Ժ. 4) :

Բայց Քրիստոսի այս նոր Եկեղեցին՝ որ է հաւատացելոց ժողովը, ունի կապարեալ ներքին սրբութիւն և փրկութիւն ՚ի մեղաց՝ արդեամբ ճշմարիտ պատարագին՝ անբիծ և անարատ զառին Աստուծոյ Յիսուս Քրիստոսին, որ աշխարհիս մեղքը շաղկեւով խաչին վրայ պատարագուեցաւ, ու իր անպարտ մահուամբը մեզ մեղքի սղծութենէն ազատեց՝ իր արդարացուցիչ արեամբը մաքրելով, և իր եկեղեցին՝ իր սրբութեանը և արդարութեանը հաղոր-

դակից ըրաւ. որով Քրիստոնէից սուրբ
Եկեղեցին Աստուծոյ գառնուկին անմե-
ղութիւնը ու սրբութիւնը ունեցաւ :
«Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ
զմեղս աշխարհի» (Յօհ. Ա. 29) : «Որով կա-
մօք և մեք սրբեցաք ՚ի ձեռն պատարագի
մարմնոյն Յիսուսի Քրիստոսի միանգամ»
(Երր. Ժ. 10) : «Արիւնն Յիսուսի որդւոյ
նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց» (Յօհ.
Ա. Կաթ. Ա. 7) :

Զորօրդ՝ Հին Եկեղեցին հաղորդակ-
ցութիւն չունէր գերբնական յաւիտենա-
կան և Աստուածային կենդանութեան հետ.
որովհետեւ Աստուածային սրբաբար շնորհ-
քը տակաւին աղբերացած չէր անոր մէջ.
որով կարող ըլլային այն հոգեւոր կենդա-
նութեան ընդունակ ըլլալու գոնէ պատ-
րաստութիւն մը ոտանալ. զորօրինակ՝
ինչպէս որ թափանցիկ մարմինները՝ այ-
սինքն, օղը՝ ջուրը՝ ապակին և այլն, կըր-

նան ընդունիլ արեւին լոյսը, և ասոր ներ-
հակ՝ Թափանցիկ զօրութիւն չունեցող
մարմին մը անընդունակ է լոյսի. ասանկ
ալ Խորայէլեան ազգը չունենալով այն ա-
ւետարանական կատարելութիւնները, և
շնորհական օրէնքները, որ մարդս յաւի-
տեանական կենդանութեան դերբնական լու-
սոյն կը պատրաստէ, զրկուած ու անըն-
դունակ էին անմահ երանութեան. անոր
համար Գաւիթ մարդարէն նմանութեամբ
խօսելով՝ կը ցուցունէր հին Եկեղեցիին
այս պակասութիւնը. սր ինքն ալ Եկեղե-
ցիին մէջն էր. և ասանկ կ'ըսէր, «Ի քէն
է տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց
քոց տեսանեմք զլոյս» (Սաղմ. ԼԵ. 10) :

Բայց Քրիստոսի նոր Եկեղեցին՝ աւե-
տարանական կատարելութեան շնորհական
օրէնքով հաղորդ եղաւ Աստուածային հո-
ղևոր անմահ կենդանութեան. որովհետեւ
այն սրբաբար շնորհքը, որ Յիսուսի միջ-

նորդութեամբ ունեցաւ, Աստուածային
զերբնական կենդանութեան հաղորդ և
ընդունակ ըրաւ այս սուրբ Եկեղեցին :
Ուստի հիմայ Քրիստոսի Եկեղեցին՝ տի-
րապէս և իրաւամբ ունի այն հոգեւոր և
երանաւէտ կենդանութիւնը, որ Քրիստո-
սի շնորհքովը ստացաւ. ըստ այնմ, «Ես
կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք»
(Յօհ. ԺԳ. 19) : «Եւ կեանքն յայտնեցաւ,
և տեսաք՝ և վկայեմք՝ և պատմեմք ձեզ
զյաւիտենական կենացն, որ էր առ հօր
և երևեցաւ մեզ» (Յօհ. Ա. Կաթ. Ա. 2) :

Հինգերորդ՝ հին եկեղեցւոյ ժողո-
վուրդներուն՝ միայն երկրաւոր բարիք կը
խոստանար ամենաբարին Աստուած. ու-
րովհետեւ երկնաւոր յաւիտենական բա-
րիքներէ մերժված վիճակի մէջ ըլլալով,
տակաւին երկնաւոր բարութեանց ու փա-
ռաց ժառանգ չէին. ուստի թէ որ ու-
ղէր Աստուած արժանաւոր մէկը բարու-

Թեամբ մը մեծարել միայն երկրաւոր բա-
րիք կը խոստանար անոր, ու միայն ան-
ցաւորը ժառանգելու հրաման կուտար, և
չէ թէ հոգեւորը, այլ մարմնաւորը տալ
կուզէր անոնց, անոր համար երբոր Աբ-
րահամ արժանի եղաւ Աստուծոյ պար-
գէն ընդունելու՝ իր բոլորանուէր հնա-
զանդու թեանը համար, նայէ ինչ տեսակ
պարգէն կը խոստանայ անոր Աստուծոյ.
«Օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմա-
ցուցանելով բազմացուցից զզաւակ քո
իրրեւ զաստեղս երկնից բազմութեամբ, և
իրրեւ զաւազ առ ափն ծովու. և ժա-
ռանդեսցէ զաւակ քո զքաղաքս հակա-
ռակորդաց իւրոց» (Մնն. ԻԲ. 17): Նմա-
նապէս Յակոբ ալ՝ որ մօրը արդանդէն
ընտրելով սիրեց, մարմնաւոր ու երկրա-
ւոր բարիք կը խոստանայ ՚ի նշան սիրոյ.
«Զի զերկիրդ՝ յորում գուդ ննջեցեր, քեզ
տաց զդա և զաւակի քում. և եղիցի

զաւակ քո իրրև զաւաղ երկրի. և ընդ
դարձակեսցի 'ի ծովակողմն, և ընդ արեւ-
ելս, և ընդ հիւսիս, և ընդ հարաւ,
Ծնն. ԻԸ. 13) : Ասոր պէս է երկրոյ
Օրինաց մէջ գրուածն ալ. « Զգոյշ լերութե-
առնելոյ՝ որպէս պատուիրեաց քեզ տէր
Աստուած քո. և մի՛ խոտորիցիս յաջ, և
մի՛ յահեակ. ըստ ամենայն ճանապարհին՝
զոր պատուիրեաց քեզ տէր Աստուած մեր
գնալ, զի հանգուսցէ զքեզ՝ և բարի ա-
րասցէ քեզ և երկայնօրեայք լինիցիք յերկ-
րին զոր ժառանգիցէք » (Ն. 32) :

Իսկ այս նոր Եկեղեցիին այսինքն Քրի-
ստոնէից՝ կը խոստանայ Յիսուս երկնային
և յաւիտենական բարիք. և չէ թէ այս ցաւ-
աւից աշխարհիս անցաւոր կեանքը ժառ-
անգելու յոյս մը կուտայ իր հետեող-
ներուն, այլ իր աւետարանական վարդապետութեան լուսովը՝ յաւիտենական կեանքի
կ'առաջնորդէ. և համարձակու թիւն

կուտայ իր եկեղեցիին՝ երկնից բարու-
թիւնները՝ և իր արքայութեան ամենա-
ցանկալի փառքը խնդրելու . որովհետեւ
այս նոր սուրբ եկեղեցւոյս մէջ յայտնի
և սփռեալ Քրիստոնէական շնորհքը՝ ա-
մէնուն ալ համարձակութիւն կուտայ, որ
երկնից արքայութիւնը և Աստուածային
յաւիտենական փառքը վայելելու վրայ ա-
ներկբայ յոյս ունենան. «Ես եմ լոյս աշ-
խարհի. որ գայ զինի իմ, ընդ խաւար մի՛
գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Յօհ.
Ը. 12) : «Խնդրեցէք նախ զարքայութիւն
Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ
ամենայն յաւելցի ձեզ. մի՛ այսուհետեւ
հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղիւն վասն
իւր հոգասցի» (Մատ. Զ. 33) : «Քանզի
երեւցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամե-
նայն մարդկան. որ խրատէ զմեզ, զի ու-
րացուք զամբարշտութիւն և զաշխար-
հական ցանկութիւնս. զգաստութեամբ և

և արդարութեամբ և Աստուածաշնորհութեամբ կեցցուք յաշխարհի, և ակնկալցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի (Տիմ. Բ. 11):

Ասոնցմէ 'ի զատ ուրիշ շատ յայտնի ապացոյցներ ալ կը գտնանք՝ Իսրայէլացւոց հին Եկեղեցւոյն ու Քրիստոնէից նոր ուրբ Եկեղեցւոյն մէջ տեղը եղած տարբերութեանը վրայօք: Այն՝ գալու ժամանակներուն վրայ ծանօթութիւնն ունէր, իսկ այս՝ բուն ճշմարտութիւնը յայտնի աւ ներկայապէս ունի, այն յանցաւոր վիճակի դատապարտութեան մէջն էր, իսկ այս՝ արդարացեալ վիճակի փրկութեան մէջն է. այն՝ հեռու էր Աստուածային գերբնական պարգևներէն ու շնորհքներէն, իսկ այս՝ խիստ մօտ ու ժամանակաւոր ելաւ ամէն բարիքներուն: Ուրեմն էլ լմնցունենք աստ մեր բազ-

գաւառութիւնը՝ սրբազան առաքելոյն Պօ-
ղոսի խօսքովը. թէ՛ «Այսուհետեւ ոչ էք
օտարք և սկանդուխտք, այլ քաղաքա-
կիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ» (Եփես. Բ. 19) :



ԳԼՈՒԽ Դ.

Նկեղեցին երեք կերպ է :

Առաջինը՝ կ'ըսուի զինուորեալ Նկեղեցի. որովհետև երկրիս վերայ եղած հաւատացեալները՝ որոնք Քրիստոսի բարոյական մարմինը ըլլալով՝ Քրիստոսի Նկեղեցի կ'ըսվին, աւետարանական նոր օրինաց, և Աստուծոյ սուրբ Հոգւոյն շնորհացը անյաղթելի զէնքերով զինաւորած են. և ասոնցմով կրնայ զօրանալ Նկեղեցին սատանայական մոլութիւններուն և մարմինին ցանկութիւններուն դէմ. ասոնցմով արիապէս կը յաղթէ ու կը հաւրածէ սատանային սպասաւորները՝ այսինքն աւետարանի յայտնի ճշմարտութեանց դէմ հակառակող պինդ զլուխ-

ները, ուղղափառ Քրիստոնէութեան հը-
րաշալի դրօշակը քաշելով ամէնուն դի-
մացը, և առաջնորդ ունենալով իր ա-
մենայաղթ զօրագլուխը, որ է տէր Յի-
սուս. ասոնցմով կրնայ ծեծկըվել Նկեղե-
ցին՝ բարոյական և հոգեւորական պատե-
րազմներու մէջ, քակելով կործանելով հո-
գեկորոյս մոլութեանց՝ աշխարհային և
մարմնաւոր խորհրդոց՝ ճշմարտակորոյս ա-
ղանդաւորներու չար մոլորութեանց պա-
րիսպները ու բերդերը :

Այս զէնքերով կ'պաշտպանվի Նկեղե-
ցին ամէն հակառակամարտ թշնամինե-
րէն, և Քրիստոնէական ուղղափառ հա-
ւատքին և սրբազան Աստուածպաշ-
տութեան մէջ՝ ասոնցմով ապահով կը
մնայ. և մեծ յուսով կը տեսնայ՝ երանա-
կան փառաց պսակը իրեն համար պատ-
րաստուած. տեսով երանելին Պօղոս առա-
քեալ սիրտ կուտար Նկեղեցիին՝ ըսելով,

«Այսուհետև զօրացարձք տերամբ և կա-
րողութեամբ զօրութեան նորա. և զգե-
ցարձք զսղաքազինութիւն Սստուծոյ,
զի կարող լինջիք կալ ընդդէմ հնարից
սատանայի» (Եւս. 2. 10) : «Զէն զինուո-
րութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօ-
րաւոր յԱստուծոյ, առ ՚ի քակելոյ զա-
մուրս» և այլն (Բ. Կորն. 3. 4) :

Երկրորդը կ'ըսվի յաղթական Եկեղե-
ցի. որովհետև հաւատացեալները՝ քանի
որ այս աշխարհիս մէջն են, զինուորի
նման Քրիստոսի շնորհքներէն զինուորած,
թէ որ քաջութեամբ կը յաղթեն՝ հո-
գիին դէմ ծեծկովող բոլոր թշնամիները,
ու սրբութեամբ կենեն այս մարմինէն,
այն ատենը կը միաւորին Քրիստոսի ու
հրեշտակաց հետ՝ անդրանկաց յաղթա-
կան Եկեղեցւոյն մէջ՝ որ է վերինն Երու-
սաղէմ, և անդ յուսով կ'ըսպասեն Աստ-
ուածային փառաց տեսութեանը, և դա-

առաստանին օրը կատարեալ վարձք ստա-
նալու՝ նորէն ծնանելով երջանիկ ու ան-
մահ մնալու համար. որ այն տեղ ամէն
մէկուն առաքինական քաջութեանը փո-
խարէն՝ արժանաւոր պսակ պիտի բաշխ-
վի : Այս բանին վրայ ուրախանալով կը
պարծենայ սրբազան Առաքեալը. ըսելով.
«Զբարւոք պատերազմն պատերազմեցայ.
զընթացսն կատարեցի, զհաւատսն պահե-
ցի. այսուհետեւ կայ մնայ ինձ արդարու-
թեան պսակն» (Բ. Տիմ. Գ. 7) :

Ահա՛ երանելեաց այս ժողովը երկինքն
է, որոնք կ'ըսվին յողթական Յկեղեցի.
որովհետեւ անդ բոլոր սուրբերը յողթա-
կան պսակով փառաւորված՝ հրեշտակաց
բիւրաւոր բանակներուն հետ մէկ բերան
ըլլալով կը փառաբանեն ամենասուրբ Նր-
բորդութիւնը, և Աստուծոյ փառքը կը
վայելեն. այս ամէն ըսածնիս յայտնի
կ'իմացվի սրբազան Առաքեալին վկայու-

Թիւններով. «Այլ մատուցեալ էք 'ի Սի-
սիլն լեառն, և 'ի քաղաք Աստուծոյ կեն-
դանայ՝ յերուսաղէմ յերկինս. և 'ի բիւ-
րաւոր բանակս հրեշտակաց. և յեկեղե-
ցիս անդրանկաց դրելոց յերկինս, և առ
դատաւորն ամենեցուն Աստուած, և յո-
գիս արդարոց կատարելոց» (Եբր. ԺԲ. 2) :

Եւ սոքա ամենեքին վկայեալք 'ի հա-
ւատոցն՝ չեւեւ ընկալան զաւետիսն. Աս-
տուծոյ վասն մեր լուսագոյն համարեալ՝
զի մի՛ առանց մեր կատարեսցին» (Եբր.
ԺԱ. 39) :

Երբորդ՝ նիւթական եկեղեցի կ'ըսենք
քարէ փայտէ շինված տաճարներուն, ուր
որ հաւատացեալք կը ժողովին՝ Աստուա-
ծային պաշտամունքներ կատարելու հա-
մար : Այս շէնքերը կամ տաճարները՝
յարմարական անունով միայն եկեղեցի
կ'ըսովին. որովհետեւ նիւթական եկեղեցին
Քրիստոսի բարոյական մարմինէն կազմ-

ված չէ, այսինքն հաւատացելոց բազմութենէն բաղկացած չէ, այլ քարէ՝ փայտէ՝ ու հողէ շինված է. չէ՞ թէ Առաքելոց և Մարգարէից սրբազան խօսքերուն վերայ հիմնուած է, այլ հողի վրայ հաստատուած : Բայց սրբազնագործ պաշտամունքներով, և սուրբ Առաքելոց ու Մարգարէից դիրքերու կարգացմունքներով, ու սրբարար միւռնոսով օծվելով կ'ըլլայ Տաճար Աստուծոյ. որովհետեւ ալ անկէ ետքը սրբազան խորհուրդներ պիտի կատարվի իր մէջը. ասոր օրինակն էր Սողոմոնի Տաճարը, և սուրբ Սիոն վերնատունը :

Ասոր մէջ կը ժողովին հաւատացեալները աղօթք ընելու՝ և մէկ տեղ փառաբանութիւն մատուցանելու ամենակալ Աստուծոյ, սուրբ Աւետարանին խօսքերը լսելու, և Քրիստոնէական ողջամիտ վարդապետութիւնները մօտիկ ընելու. աստ

կը ժողովելին Գրիստոսասէր անձինք՝ որ
 ջերմեռանդ փափագով տեսնան սուրբ ան-
 մահ Պատարագի խորհուրդին կատարումը
 թուրք Սեղանին վրայ. որով քաւութիւն
 և թողութիւն կ'ըլլայ կենդանեաց և նրն-
 ջնցելոց մեղքերուն : Ուստի բնակողներուն
 անուամբ բնակարանին կ'ըսենք Նկեղեցի,
 բայց նիւթական ըսելով՝ կը որոշենք Զին-
 օւորականէն ու Յաղթականէն :

Այս նիւթական Նկեղեցին՝ ուրիշ զա-
 նազան պանծալի անուններ ալ ունի. զոր
 օրինակ՝ կ'ըսվի Տուն Աստուծոյ, Յարկ սր-
 բութեան, Տեղի փառաբանութեան, Բը-
 նակարան Տրեշտակաց, Քաւարան մեղա-
 ւորաց և սիրաժողով Խմբարան հաւա-
 ժացելոց :

Հերիք սեպենք այս ըսածներնիս, և
 լսենք հիմայ այս վկայութիւնները :

«Տուն իմ տուն աղօթից կոչեցի» (Մատ.
 1Ա. 13) : «Նախ՝ յորժամ 'ի մի վայր ժո-

ղովիցիք յեկեղեցին. . . : Եւ արդ՝ 'ի ժողովեւն ձեզ 'ի միասին, ոչ է տուն տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ. . . : Մի թէ տոնս ոչ ունիցիք ուտելոյ և ըմպելոյ. և թէ զեկեղեցիսաւն Աստուծոյ արհամարհէք : (Ա. Կորն. ԺԱ. 18) :



Գ Լ ՈՒ Խ Ե

Քրիստոսի Եկեղեցւոյն շնորհները :

Քրիստոսի զինուորեալ Եկեղեցին շատ կրնայ պարծիլ Աստուծոյն ձրի պարգեւած զանազան շնորհներուն վրայ, որոնք Աստուծոյ մարդասէր բարերարութենէն միշտ կը ծաւալին Եկեղեցւոյ վրայ՝ արեւին ճառագայթներուն պէս. որովհետեւ անոնցմով կը աճի ու կը զօրանայ Եկեղեցին՝ տեսակ տեսակ առաքինական գործքերու մէջ. անոնցմով հաստատ ու անշարժ կը մնայ Աւետարանական կոչման ու ճշմարիտ հաւատքի մէջ. այն շնորհներով հաղորդ կրնայ ըլլալ երկնաւոր ու գերբնական բարիքներու և Աստուծոյ փառքին. այն շնորհներով կարող կրնայ

ըլալ մինչև յԱստուածանմանութիւնն
բարձրանալու՝ Դիանէսիոս Աստուածա-
բանին ըսածին նայելով։ Ուստի կը պար-
տաւորի Նկեղեցին Աստուծմէ ձրի ըն-
դունած շնորհքները ճանչնալու, և այն
գերբնական ձիրքերը պարզեողին գոհու-
թիւն մատուցանելու, որ անոնցմով այն-
քան մեծացաւ ու հարստացաւ Աստ-
ուածգիտութեան և Աստուածպաշտու-
թեան մէջ՝ ամէն բանով կատարեալ։
«Գոհանամք զԱստուծոյ իմոյ յամենայն
ժամ վասն ձեր՝ ՚ի վերայ շնորհացն Աս-
տուծոյ, որ տուեալ են ձեզ ՚ի Քրիստոս
Յիսուս. զի յամենայնի մեծացարուք դուք
նովաւ՝ ամենայն բանիւ և ամենայն գի-
տութեամբ» (Ա. Կորն. Ա. 4)։

Այս Աստուածապարգև շնորհքը՝ կը
նորոգէ մարդու հոգին, ու կը լուսաւո-
րէ միտքը, կը հալածէ մեղքը, ու կը
մաքրէ խղճմտանքը. կը յայանէ այս աշ-

խարհիս ունայն և անցաւոր ըլլալը, ու
հիմակվնէ կը ցուցանէ յաւիտենական
փառքը. ասոնցմով կը ուժովնան ու սիրո
կ' առնեն առաքինի մարդիկ՝ չհոգնելու
ևս առաւել առաջ երթալու բարձր ա-
ռաքինութիւններու մէջ. և այս շնորհք-
ներու մէջ՝ մտօք լուսաւորութիւն, բոլորո-
վին կը մերժեն ամէն մոլորութիւնները,
ու արդարութեան ճամբուն կը հետեւին :
Ասով Սօղոսը՝ Պօղոս ըսկիցաւ, ու Քրիս-
տոսի Եկեղեցւոյ հալածիչը՝ կենաց բանին
քարոզիչ եղաւ. ասով մաքսաւորները ու
մեղաւորները աշխարհիս ցանկութիւնները
ու փափաղները ձգեցին, ու իրենց խաչը
առնելով Քրիստոսի ետեւէն գացին. մար-
տիրոսները ասով զօրացան իրենց արիւնը
թափելու. ճշմարտութիւն դաւանող բո-
լոր սուրբերուն անունները՝ այս շնորհքով
կը գրվին երկինքը՝ կենաց դպրութեան
մէջ : Եւ այս պարգևները Աստուծոյ բա-

րերար մարդասիրութենէն ըլլալուն վրայ՝
լսէ այս վկայութիւնները: «Զի շնորհօք
նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյ և
այս ս'չ 'ի ձէնջ' այլ Աստուծոյ պարգև է.
սչ 'ի դործոյ՝ զի մի՛ ոք պարծեսցի» (Ն-
փես. Բ. 8): «Այլ յորժամ կամեցաւ
Աստուած, որոշեաց զիս յորովայնէ մօր
իմոյ, և կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց»
(Գաղ. Ա. 15):

Ուստի Պեղազեանք ու Կիսապեղազեանք
ըսված մոլորեալները՝ պարապ տեղը կ'ջա-
նային իրենց ծուռ կարծիքը հաստա-
տելու, թէ մարդս՝ չէ՛ թէ շնորհօք, այլ
ընկ բնական կարողութեամբ կրնայ ճշմա-
րիտ հաւատքը ընդունել, ու Աստուած-
պաշտութեան հետեւիլ, ու բարի դործ-
քերու մէջ առաջ երթալ. բայց Եկեղեց-
ւոյ սրբազան վարդապետները՝ ասոնց դէմը
ելնելով Աւետարանական ճշմարտութեան
զօրաւոր խօսքերով, պապանձեցուցին ա-

նոնց բերանները և այս ծուռ վարդապետութեան մոլորութիւնները մերժեցին, Բրիտանի Նկեղեցիէն դուրս հանեցին՝ հաստատ ցուցունելով, թէ՛ կարող չէ մարդ առանց Աստուծոյ շնորհացը՝ ինքն իրեն իր խելքովը խորհիլ Աստուածային ու բարի վստահան ունեցող բան մը. և այս ճիշմարտութիւնը աւետարանական և առաքելական վարդապետութիւններու ապացոյց հաստատեցին. որոնցմէ մէկ քանին աստ կը յիշենք : «Առանց իմ ոչինչ կարէք առնել» (Յով. ԺԵ. 5) : «Իբրեւ ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրեւ ՚ի մէնջ, այլ բաւականութիւն մեր յԱստուծոյ է» (Բ. Կորն. Գ. 5) : «Երանի քեզ Սիմոն որդի Զօհանու. զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է» (Մատ. ԺԶ. 17) :



Գ Լ Ո Ւ Խ Զ.

Խնչ է շնորհքը :

Շնորհքը՝ համառօտապէս այսպէս կը
սահմանվի Աստուածաբաններէն :

«Շնորհքը՝ Աստուծոյ գերբնական պար-
գէնն է, որ իր բնական ստեղծուածնե-
րուն ձրի տլած է՝ Քրիստոսի արդիւնք-
ներով յաւիտենական փրկութեան հաս-
նելու համար» :

«Գերբնական» ըսելով կը որոշվի Աս-
տուծոյ բնական պարգէններէն. ինչպէս են
բոլոր բնական և զգալի բարիքները, որոնք
տրտաքին վայելչութեան համար իբրեւ
պարգև՝ շնորհեց բնական ստեղծուած-
ներուն՝ որ վայելեն իրենց կենաց պիտոյից
և զուարճութեան համար, և փառք տան
այն ամէն բաները ստեղծող Արարչին :

Ասոր պէս են մեր վրայ ունեցած խնամքերն՝ որպէս զանազան թիւեր, և հոգիներնուս ու մարմիններնուս աւուակ տեսակ բնական ձիրքերը. որովհետեւ միտքն ու կամքն մեր հոգւոյն կարողութիւններն են Աստուծոյ պարգևած. որ անոնցմով հոգին իսկ իմանայ, կը մտածէ, կը ճանչնայ, կը յիշէ, կը կամի ու կը դործէ. և ասոնցմէ գերազանց ձիրք՝ հոգիին անմահութիւնն է : Նմանապէս մարմնոյ վրայ ալ կ'երևի յատուկ ձիրքեր, որ է շիտակ կանգնած վայելուչ հասակը, զգայարանքներուն գեղեցիկ յարմարութեամբ տեղն ի տեղը դրուածքը. որոնցմով ամէն կենդանիներէն աւելի գեղեցիկ կ'երևայ :

Ասոնց կարգն են ուրիշ ամէն բնական բարիքներն ալ, որ կը վայելեմք Աստուծոյ խնամքով, որոնք տիրապէս կ'ըսվին շնորհք, կամ Աստուծոյ ձրի պարգևներ,

որովհետեւ չար ու բարի մարդիկ միօրինակ կը վայելեն անխտիր :

Բայց Աստուածաբաններուն գերբնական շնորհք ըսածը՝ Աստուծային այն ձրի և առատ պարգևներն են, որոնք բնական կարգէ վեր են :

«Ձրի տված» ըսվելով յայտնի կ'ըլլայ, թէ ինչպէս որ Արարչին խնամքով ձրի պարգևեցաւ մարդուն՝ իր բանական բնութիւնը, ըստ այնմ, «Նա արար զմեզ՝ և ոչ մեք էաք» (Սաղ. ԳԹ. 3), այսպէս ևս շնորհքը միշտ ձրի կը արվի մեզի իր բերարութենէն, ու չէ թէ մեր վաստակն է :

«Բանական ստեղծութիւններուն» ըսվելով՝ յայտնի կ'ըլլայ, որ ամէն էակ ընդունակ չեն այս շնորհքին, այլ միայն բանականները, որոնք անմահ հոգի ունին, և մշտեով ու կամքով ճոխ ու զարգարված են, որով կրնան շնորհաց գերագոյն յարգը ճանչնալ ու ընտելլ. և փափագով անոր

փաթթվիլ և մեծարանքով պահել զայն, հաստատ գիտնալով, թէ՛ իրենց երանաւէտ վախճանին հասցնող մէկ հատիկ պատճառն է շնորհքը, և մինչև երկինքը բարձրացած յաւիտենական կենաց սանդուղն է, անով կը հասնվի երկնից արքայութեան փառքին, այն պատճառաւ ըսվեցաւ՝ «Յաւիտենական փրկութեան հասնելու համար» :

Այս բոլոր սահմանը՝ միայն զերբնական շնորհքին կը վերաբերի, որ կը առաջնորդէ դէպ ՚ի յաւիտենական փառքը : Ասոր կը վայլէ այս վկայութիւններուն ճշմարտութիւնը. «Զի արդարացեալք շնորհքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց» (Տիտ. Գ. 7) : «Եւ Աստուած ամենայն շնորհաց որ կուտայ զձեզ յիւր յաւիտենական փառսն՝ Յիսուսիւ Քրիստոսիւ» (Պետ. Ա. Կտթ. Ե. 10) :

Ուստի այս դերբնական շնորհաց ձրի պարզւներուն ընդունակ է Նկեղեցին Քրիստոսի մարդեղութեան հզօր արդիւնքներով. անոր համար սահմանին մէջ՝ Քրիստոսի արդիւնքներով ըսվեցաւ. որովհետեւ Քրիստոս Նկեղեցիին բացարձակ և ընդհանուր զլուխն է, և Նկեղեցին անոր բարոյական մարմինն է. ուրեմն հանրական շնորհքները տիրապէս կը հոսէ իրբէ գլուխ իր անդամներուն. անոր համար Նկեղեցին կամ հաւատացելոց ժողովը՝ պարտաւոր է ճանչնալու, թէ շնորհքը՝ մեր կենարար Յիսուսի հրաշալարդ մարդեղութեան պարզւն է. ու ինքն է շնորհաց առաջին պատճառը, և մեր փառաց տէրը :

«Ի լրութենէ նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց . . . : «Շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն» (Յօհ.Ա. 16) :

«Զի ՚ի նմա բնակէ ամենայն լըու մն Աստ-
ուածութեան մարմնապէս. և էք դուք
նովաւ լըեալք, որ է գլուխ ամենայն իշ-
խանութեան և պետութեան» (Կող. Բ. 9):



ԳԼՈՒԽ Է.

Քանի տեսակ է շնորհքը :

Երկու տեսակ շնորհք կայ. արտաքին
և ներքին :

Արտաքին շնորհքը՝ Աստուծոյ ձրի
գթութեան և զերբնական նախախնա-
մութեան զարմանալի ներգործութիւնն
է. և այս շնորհք ունեցողներուն վրայ
բարոյապէս կ'երևայ դուրսէն անոր ար-
դիւնքը. որոնք կը նմանին վազուկ ջուրի
քով տնկած ու արմատ կապած ծառի մը՝
որ ժամանակին՝ պտուղներով զարդարուած
գեղեցիկ և վայելուչ կը տեսնվի. ինչպէս
են անոնք՝ որ կտրճութեամբ կը համբե-
րեն շատ տեսակ մեծ մեծ նեղութիւննե-
րու՝ փորձութիւններու՝ և հալածանք-
ներու, կամ թէ որոնք՝ որ կ'օգնեն և

կողորմին անողնական կարօտեալներուն, կամ
թէ անոնք՝ որ անտանելի չքաւորութեան
մէջ տեղոհանք չլինելով միշտ զոհանան
իր թէ առատ բարիքներով լեցուած են:

Այսպէս արտաքին շնորհաց արդիւնք-
ներ և առաքինութիւններ՝ գործքով ցու-
ցուց Մակեդոնացւոց Նիկեացին՝ այսինքն
Մակեդոնիայի մէջ եղած Քրիստոնեաները՝
որոնց բարեպաշտական գործքերը սրբա-
զան առաքեալն Պօղոս գովելով կը հը-
րատարակէ ուրիշներուն, և պատճառը
գործին տեղը առնելով՝ շնորհք կ'անուա-
նէ անոնց առաքինութիւնները:

«Յուցանեմ ձեզ | եղբարք՝ զշնորհոն
Աստուծոյ. որ տուեալ են Նիկեացեացն Մա-
կեդոնացւոց. զի մեծաւ հանդիսիւ նե-
ղութեան՝ առաւելութիւն խնդութեան
նոցա, և ծանր աղքատութիւն նոցա՝ ա-
ռաւել եղև 'ի մեծութիւն առատութեան
նոցա» (Բ. Կորն. Ը. 1):

Մեր կենարար Յիսուսին մարդկողութեամբը Աստուծոյ սքանչելի մարդասիրութեան արտաքին շնորհքը յայտնի եղաւ մարդկային սեռին. ճշմարիտ է որ՝ մեծ շնորհաբաշխութիւն եղաւ բոլոր աշխարհիս աչքին առջեւ՝ սուրբ կոյսէն ծնանելովը, որդի մարդոյ ըսկելովը, աշխարհի մեղքերը վերցնող գառն Աստուծոյ կոչվելովը, սքանչելի հրաշագործութիւններովը, կենսատու վարդապետութիւններովը, կամաւոր չարչարանքներովը, մեզ փրկելու համար խաչվելովը, իր կարող զօրութեամբ յարութիւն առնելովը, և մեծ փառքով ինքնիշխան՝ երկինքը համբառնալովը :

Մեր փրկիչ Յիսուսին այս արտաքին առատ շնորհաբաշխութիւններէն՝ յաջողեցաւ մեզի ալ մահէն կեանքի փոխվիլ, դատապարտութեան վիճակէն՝ փրկութեան վիճակը անցնիլ, մեղաց անարդուութենէն՝

Աստուածային փառքը ժառանգել : Այս
Ճշմարտութիւնը յայտնի կը ցուցանեն
հետեւեալ վկայութիւնները :

«Եւ բանն մարմին եղև՝ և բնակեցաւ
ի մեզ. և տեսաք զփառս նորա զփառս
իրբև զմիածնի առ ՚ի հորէ լի շնորհօք
և ճշմարտութեամբ» (Յօհ. Ա. 14) :

«Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ
Փրկիչ ամենայն մարդկան» (Տիտ. Բ. 11) :

Ներքին շնորհքը՝ Աստուածային այն
գերբնական պարգևն է, որ մարդուս ներ-
սի դիէն կը շարժէ ու կը զօրացնէ կամքը
ու յօժարութիւնները, որով անկէ ետքը
ըրաժ գործքերը արդարութեամբ և ուղ-
ղութեամբ կը գործէ, և իր բարի դի-
տաւորութիւններու արդելքները կը խա-
փանի կը վերնայ, և ահա այսպիսի շը-
նորհքով կարող կ'ըլլայ ամէն մարդ հոգ-
ւոյն փրկութիւնը և երկնից փառքը
ձեռք անցունելու :

Այս անյաղթելի զօրութիւնը՝ Հոգւոյն
որբոյ պարզեն էր, որ Յիսուս իր առա-
քեալներուն կը խոստանար երթիկքէն անոնց
շնորհել, որ զօրանան և անյաղթելի մը-
նան ամէն տեսակ հակառակութիւններու
և թշնամիներու դէմ :

Եւ ահա՛ ես առաքեմ զաւետիս Հօր
իմոյ՝ ի ձեզ, և դուք նստարո՛ւք յերու-
սաղէմ մինչև զգենուցութիւն զզօրութիւն
ի բարձանց» (Ղուկ. ԻԴ. 45) :

«Յամենայնի կարող եմ, այնու՝ որ զօ-
րացոյցն զիս» (Փիլիպ. Դ. 13) :



ԳԼՈՒԽ Ը.

Քանի տեսակ է ներքին շնորհքը

Ներքին շնորհքը չորս տեսակ է.
ներգործական, սրբարար, ձրխատուր, գործադիր :

«Ներգործական» շնորհքն է մէկ գերբնական լոյս մը, որ Աստուծոյ անսահման բարութենէն կը ծաղի, ու կը ներգործէ հոգիներուն. այս շնորհքն է որ գերբնականապէս կը լուսաւորէ ընդունողներուն միտքը, ու կը շարժէ ճշմարտութիւնը ճանշնալու. որով մարդս սաստիկ յօժարութեամբ կը վառի Աստուածաբանական առաքինութիւններու մէջ՝ որք են հաւատք՝ յոյս՝ և սէր. այսինքն Քրիստոնէական ուղղափառ հաւատքին

մէջ կը հաստատուի, խոստացված երկնա-
ւոր բարութիւններու վրայ անկասկած
յոյս կ'ունենայ, զԱստուած՝ ու իր ընկերը
կատարեալ սիրով կը սիրէ. զԱստուած կը
սիրէ՝ որ գերագոյն բարին է, ու ընկերը
կ'սիրէ՝ որ Աստուծոյ պատկերակիցն է :

Այս ներդործական շնորհքով միտքը
կը բացվի ամէն գերբնական ուսմանքները
դիւրաւ սորվելու. ասով կամքը ինքիրնն
կը յօժարի Աստուծոյ անժխտելի հրա-
մանները սիրով կատարելու. և ահա այս
ըսածներս կը հաստատուի այս վկայու-
թիւններով :

Գրեալ է 'ի մարդարէս, և եղիցին ա-
մենեքեան ուսեալք յԱստուծոյ. ամե-
նայն որ լսէ 'ի Հօրէ և ուսանի, դայ առ իս
(Յօհ. 2. 45) : Իսկ մխիթարիչն Հոգին
սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ,
նա ուսուցէ ձեզ զամենայն. և յիշե-
ցուցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի

ձեզ (ՅՕՀ. ԺԴ. 26) : «Կին ոմն անուն Լի-
դիա ծիրանավաճառ՝ ՚ի Թիւատիր քա-
ղաքէ՝ երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ. զո-
րոյ տէր իսկ եբաց զսիրտ անսալ խօսից
Պօղոսի» (Գործ. ԺԶ. 14) :

«Սրբարար» շնորհքն է մէկ գերբնական
ընդունակութիւն մը, որ կը տարածի ու
կը ծաւալի հաւատացեալներուն հոգւոյն
մէջ. և կը սրբացնէ զանոնք, որոնք որ
կը մերձենան ապաշխարութեան սրբարար
և արդարացուցիչ խորհուրդին և կը հա-
ղորդին կենարար մարմնոյ և արեան Յի-
սուսի. որով այս մեր հոգիդէն բնութիւնը
կը հաղորդի Աստուածեղէն անեղ բը-
նութեանը հետ : Այս սրբարար շնորհքը
Աստուծոյ բարերար մարդասիրութենէն
մեր հոգւոյն մէջ տպաւորվելով՝ մեզ յա-
ւիտենական երանութեան ժառանգ կ'ընէ,
և մեր Տէր Յիսուս Քրիստոսին ժառան-
գակից կ'ընէ. ինչպէս որ այս վկայու-

Թիւնները կը ցուցունեն. «Հայր զորս եւ
տուրն ինձ, կամիմ՝ զի ուր եսն եմ, և
նորա իցեն ընդ իս. զի տեսանիցեն ըզ-
փառս զորս ետուրն ցիս» (Յօհ. ԺԵ. 24) :
«Իսկ եթէ ընդ լոյս զնայցեմք՝ որպէս և
նա՝ ի լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ
միմեանս. և արիւնն Յիսուսի որդւոյ նո-
րա սրբէ զմեզ յամենայն մեղաց» (Յօհ. Ա.
Կաթ. Ա. 7) : «Որ փրկեացն զմեզ, և կո-
չեաց զմեզ ի կոչումն սուրբ. ոչ ըստ գոր-
ծոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջա-
դրութեանն և շնորհաց՝ որ տուաւ մեզ
ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամա-
նակս յաւիտենից» (Բ. Տիմոթ. Ա. 9) :

«Չրիատուր» շնորհքն է՝ Աստուծոյ
որովաճ զերբնական պարզեմը՝ անով ու-
րիշներուն փրկութիւնը հոգալու համար.
ուստի այս ճրիատուր շնորհքը ո՛ր
կ'ըստանայ. անոր ձեռքով շատ հոգևոր
օգուտներ յառաջ կուգան. շատ մարդոց
բարեգործութեան ու առաքինութեան

պատճառ կ'ըլլայ՝ մանաւանդ այնպիսիներուն՝ որ շնորհապարգ մարդոց ողջամիտ վարդապետութեանը և բարոյական խնայարարներուն ականջ կը դնեն ու կը հետեւին :


Այս պարզեանքներուն շատը Առաքեալներուն, և առաքելաշնորհ վարդապետներուն, և Աստուածային սուրբ մարդոց, և հոգևոր Հովիւներուն և բարեջան Ուսուցիչներուն շնորհեցաւ : Այս ճիշատուր շնորհքը կերպ կերպ կը բաժանվի գործածողներուն կերպ կերպ պաշտօնին նայելով, ինչպէս որ մեծ ծառ մը՝ որ շատ ճիւղեր ունի. նայէ ինչ կ'ըսէ սրբազան Առաքեալը : «Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է. եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն յամենայնի. բայց իւրա-

քանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն
Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտս. և
այն (Ա. Կորն. ԺԲ. 4) :

Մի և նոյն Հոգին սուրբէն կուգայ
այս բաղմատեսակ ձրիապարզ և շնորհքը,
բայց հասարակաց օգտին և Եկեղեց-
ւոյ պայծառութեանը համար՝ ընդու-
նողներուն արժանաւորութեանը ու կա-
րողութեանը յարմար կերպով կը տրվի
անոր համար՝ այս շնորհքները որոնց որ
կը յանձնվի, պէտք է որ՝ հաւատարիմ
զանձապետներու պէս՝ և Աստուծոյ զա-
նազան շնորհքներուն պաշտօնեայ եղածի
պէս՝ մատակարարեն Աստուծոյ փառքին
և ընկերին օգտին համար, որովհե-
տեւ պարզ և ողին ևս մարդասէր կամքը
այն է : Եւ ահա՛ սրբազան Առաքեալն
Պետրոս ևս յայտնի կերպով կը յորդորէ
ամէն շնորհքակալները՝ որ իրենց յանձնը-
ված այս շնորհաց մատակարարութիւնը

չինայեն իրենց եղբայրներէն, այլ աննա-
խանձ նուիրեն կարօտեալներուն, ինչպէս
որ եղբայրսիրութեան ու մարդասիրու-
թեան ուղիղ կանոնը կը պահանջէ : Եւ-
րաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս
ինչ, զնոյն մատակարարել իբրեւ զբարւոյ
հազարապետս պէս պէս շնորհացն Աս-
տուծոյ (Պետ. Ա. Կաթ. Դ. 10) :

«Գործադիր» շնորհքը կ'օգնէ ու կը
զօրացնէ մեր տկար ու աշխարհասէր իր-
նութիւնը, որ յօժարութեամբ՝ բարին
սիրենք, ու չարութիւնը ատենք. այս՝
հաճոյսրար շնորհք ևս կ'ըսվի. որովհե-
տեւ բնորոշողին կամքը դէպ 'ի բարին կը
շարժէ, ու վարքը շտկել կուտայ, և Աստ-
ուածահաճոյ կ'ընէ զանի : Այս՝
Աստուծոյ ուզած բաները խորհել կու-
տայ մտքին, ու կ'արտորցնէ պէս պէս ա-
ռաքինութիւններու մէջ առաջ երթալու,
և անոնց յարդը գործքով յայտնելու :



Այս՝ մեղաց թոյնին դեղթափն է. այս՝ մեծ
փող մըն է, որ խղճմտանքը կ'արթնացնէ՝
բարին ու չարը որոշելու համար՝ ճշմար-
տութիւնն ու ստութիւնը մէկգմէկէ տար-
բերելու համար. այս է՝ որ ընդունողը ճշ-
մարտասէր և բարեգործ կ'ընէ. ասով՝ հո-
գին ամէն տեսակ առաքինութիւններով ու
բարոյական փարթամութիւններով կը հա-
րուստնայ: «Ո՛չ կարէ մարդ առնել յանձնէ
և ոչ ինչ, եթէ ո՛չ իցէ տուեալ նմա յերկ-
նից՝ ՚ի վերուստ» (Յովհ. գ. 27): «Զի որք
մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ո՛չ
կարեն. բայց դուք ո՛չ էք մարմնով՝ այլ
հոգւով. եթէ իցէ Հոգին Աստուծոյ ՚ի ձեզ
բնակեալ» (Հռովմ. ր. 8):

Նայէ երկինքը՝ կրնաս համրել բոլոր
աստղերը. նմանապէս ասհնար է համ-
րանքի բերել Աստուծոյ շնորհքներուն ան-
բաւ տեսակները. ուստի ահա՛ Աստու-
ծոյ այս բազմատեսակ շնորհքներով

կարող կ'ըլլանք բարեգործ ըլլալու, և յա-
ւիտենական կենաց ու փառացն հասնելու :



ԳԼՈՒԽ Թ.

Աստուծոյ շնորհքները ընդունելու քանք
և հոգ ընել պէտք է :

Ամենարարի ու մարդասէրն Աստուած
կուզէ որ՝ ամէն մարդ ապրի յաւիտենա-
կան կենաց համար, ու ճշմարտութիւնը
ճանչնալու մէջ հաստատ մնայ, ու իրեն
փառաբեր հաղորդ և ժառանգ ըլլայ, ուս-
տի մէկէ մը չի խնայեր իր շնորհքները,
ու բնաւ յետ չի մնօր զանոնք պարզե-
կէն : Բայց մարդիկ շատ անգամ կը զըրկ-
վին այն Աստուծային ձրի շնորհքներէն
իրենց անհոգութեամբը, և չար կամքովը,
որ Աստուծոյ անչափ առատաձեռնու-
թեանը հակառակ է : Արեւին դործն
է՝ ամէնը լուսաւորել. բայց այն որ կը
փակէ պատուհանները անոր լուսին գէմ,
ի հարկէ կ' զրկվի անոր աշխարհաճաւալ
ճառագայթներէն :

Այսպէս ալ թէ որ մեր ընթացքը ծռած
ու մշար, և մեր վարքը գէշ է,
Աստուծոյ զանազան շնորհքներէն կը
զրկուիմք:

Աստուած՝ անհուն շնորհքներու աղ-
բիւր մըն է. և կարօտները իրեն կը կան-
չէ՝ ըսելով, «Եթէ որ ծարաւի իցէ, եկես-
ցէ առ իս և արբցէ» (Յօհ. է. 37):

Ուրեմն պէտք է մեզի՝ առանց ծու-
լութեան այն շնորհք բղխող աղբիւրին եր-
թալ, և մեր փրկութեան հարկաւոր եղող
այն ձրիական պարգևը ընդունել անկէ:

Աշխարհասիրութիւնով ու երկրաւոր
ցանկութիւններով լցված սիրտը՝ Աստուա-
ծային շնորհաց ընդունակ չէ. ինչպէս որ
լեցուն ամանի մը մէջ՝ ուրիշ մաքուր ու
պատուական խմելիք մըն ալ չի լիցվիր:
Ուստի թափէ սրտիդ ամանէն աշխարհա-
սիրութեան փուճ ցանկութիւնները, որ

տեղը շնորհքներ լեցընես, և ըլլա՛ սիրտդ
մաքուր անօթ մը, և երկնաւոր բարիքնե-
րու աման մը: Աստուծոյ ծայրագոյն բա-
րութիւնը յօժար ու պատրաստ է՝ մեզի
մեր հարկաւոր բարիքները առատ առատ
պարգեւելու, ու արտաքին և ներքին պար-
գեւներով մեզ լեցընելու. բայց մեզնէ այս
կ'ուզէ որ՝ կամքերնիս բարիին հետեւե-
ցընեմք, աշխարհիս փուճ զուարճութիւն-
ները մէկդի ձգեմք, մտքերնուս մէջէն
չար խորհուրդները հեռացնեմք. և այս
բաները՝ չէ թէ իրմէն բռնադատվելով
ընեմք, այլ մեր անձնիշխան և ազատ յօ-
ժարութեամբը: Որովհետեւ՝ ինչպէս
որ Սիրաք կ'ըսէ (Ժէ. 6). Աստուած՝
որ մեզ ստեղծեց, խելքով մտքով զարդա-
րեց մեր հոգին ու մեր սիրտը՝ ու մեր անձ-
նի շխանութեանը յանձնեց, որ տղատ կամ-
քով ընտրենք բարին՝ ու չարը, լոյսը՝ ու
խաւարը, և այլն:

Ո՞ր թողու մք բնական օրէնքն ալ որ քու
սրտիդ յօժարու թեամբը ու մոքիդ վկա-
յութեամբը ներսի դիէդ կ'իմացնէ կը սոր-
վեցնէ քեզի՝ աղէկը գէշէն զատելը, ու
փրկութեան շիտակ ճանապարհը կորստեան
ծուռ ճանապարհէն որոշելը, ու կը խրատէ
քեզ որ՝ ինչ որ դուն չես ուզեր թէ՛ ընեն
քեզի ուրիշները, դուն ալ մ'ըներ ան բա-
ները ուրիշներուն:

Որովհետեւ կը ճանչնաս քու պատիւդ
ու քու անարգանքդ, ու չես ուզեր անարգ-
վիլը: այլ պատիւդ կը փնտռես, այնպէս
է նէ՝ կրնաս ընտրել բարին ու չարը, բա-
րին սիրել՝ ու չարը չսիրել, մոլութիւն-
ներէ հեռունալ՝ ու առաքինութիւննե-
րու փաթթը վիլ. և որով պատրաս-
տըլած կ'ըլլաս Աստուածային ձրիապար-
գեւ շնորքները ընդունելու: Այս ըսածնե-
րէս կ'ուզեմ հասկցընել թէ՛ ամենա-
բարին Աստուած կ'ուզէ որ՝ իր երկնա-

Հիր շնորհքները առատ առատ պարգևէ
քեզի. բայց կը նայի որ՝ դուն ալ քու ա-
զատ կամքովդ հետեւիս իր մարդասէր
ու բարերար կամքին: Յարմար ու գեղե-
ցիկ օրինակով մը աս բանին կը յորդորէ
մեզ նսայեայ մարգարէութեան մեկնիչ
շնորհապերճ Գէորգ վարդապետն մեր՝ ը-
սելով թէ՝ « Զորօրինակ չէ հնար լուսոյ
լուսաւորել զաչս, եթէ ոչ նախ աչքն ա-
ռողջ իցեն, նոյնպէս և Աստուծոյ խնամքն
ոչ ճանաչի մեզ, եթէ ոչ միտքն ՚ի ներքս
առողջ իցեն մեզ: (՚ի մեկնութեան անդ):

Ուրեմն չըլլայ որ՝ անմտութեամբ աշ-
խարհային բաներու ետեւէն իյնաս, և
փութ պատճառներով առաքինական գործ-
քերէ ետ մնաս: Ճանչցիր անցաւորը, ճանչ-
ցիր յաւիտենականը. հոգ տար ու ջանք
ըրէ հոգւոյդ փրկութեանը համար, եւ
քաշվէ այս սուտ աշխարհիս փութ դուար.
Ճութ իւններէն: Զգուէ մարմնաւոր գէշ

ցանկութիւններէն, ու սկսէ զմայլիւհոգեւոր մտածմունքներով, այն ատենը կը տեսնաս թէ՛ կենաց առատաբուղի աղբիւրէն շնորհաց հոսանքները ի՞նչպէս պիտի լեցվին հոգւոյդ մէջ, և անով որչափ առաքինութիւններու ճիւղեր պիտի բուսնին ներսի դիւ, որ անմահ կենդանութեան հոգեւոր պտուղներ բերեն քեզի:

Համարձակէ՛ ապաւինէ՛ բարեւարտութեանդ ու առաքինասէր յօժարութեանդ, ու մի՛ երկբայիր փրկութեան և երանութեան շնորհքները Աստուծոյ անսահման մեծութենէն ստանալուդ: Զգո՛յշ եղիր, որ Աստուծոյ առտտաձեռն բարերարութիւններէն ետ չմնաս զգուշացի՛ր՝ որ անհոգութեամբդ ու կամապաշտութեամբդ չարգիլես չվռնտես քէնէ այն երկնային անհատնում հոգեշահ գանձերը ասի ձգելը, զի է մաքիւր միջոյս Աստուածարանական առածը, թէ՛ «Որ յո-

չէից արար զքեզ՝ առանց քեզ, ոչ փրկեացէ արդ և զքեզ՝ առանց քեզ:

Այս երկնային ձրի պարզւել կը վաստակի մարդ՝ թէ որ այն շնորհքներուն հետևող բարի կամք մը ունի:

Այս մեր ըսածները յայտնի կ'երևան սուրբ գրքին այս օրինակներէն:

Աստուած՝ Նոյ նահապետը իր ընտանիքովը ապրեցընել ուղեց ջրհեղեղէն, բայց կը հրամայէ անոր՝ որ աշխատի այն մեծագործ տապանը իր ձեռքով շինելու՝ իր ազատութեան համար (Մենդ. զ. 14):

Կ'ուզէ Նեեմանը բժշկել իր բորոտութենէն՝ Նզիսէ մարդարէին ձեռքովը, բայց հրաման կ'ընէ, որ ինքն ալ երթայ լուացփի՝ Յորդանան գետը եօթն անգամ (Դ. Թագ. ե. 10):

Ամենափրկիչն Յիսուս՝ իր մարդասէր ու բարերար կամքովը յօժարեցաւ ի ծնէ կուրին աչքը բանալու, բայց կը հրամայէ

որ՝ կոյրն ալ իր աչքերուն բացուելուն
համար հողնի՛ ու երթայ լուանայ աչքերը
Սելովմ ըսված աւաղանը (Յովհ. Թ. 7):

Աստուած այլն շնորհքներուն փախու-
քողները՝ պէտք է որ գիտնան ու սորվին,
թէ ի՞նչպէս կամ էր կերպով կրնան հե-
տեւիլ այն շնորհքներուն, և հարկ է որ՝
ապահով ըլլան, թէ որ արժանի և ըն-
դունակ են իրենք այն երկնաձիր պարգե-
ներուն: անոր համար իրենց վրայ հաս-
տատ սովորութիւն ընելու են այս Աստ-
ուածահաճոյ կրթութիւնները: այսինքն
բոլոր սրտով՝ և բոլոր մտքով զԱստուած
սիրել և իրեն պատուիրանքները պահել
(Յովհ. Ժդ. 23):

Նմանապէս՝ ճշմարիտ եղբայրսիրու-
թեամբ աննախանձաբար աշխատիլ եղբօրը
և ընկերին շահին համար (Յովհ. Ժե. 17):

Հոգեւէր ըլլալ և չհաճիլ այս աշ-
խարհիս անցաւոր ու փուճ ցանկութիւն-

ներուն, ապաշխարութեամբ յաղթել մե-
ղաց բռնութիւնները, խանարհ սրտով և
բարեպաշտ դիտաւորութեամբ ցանկալու
փափագիլ Աստուածային շնորհքներուն
ու փառքին, և անոնց վրայ մամտալ միշտ
և հանապազ (Հռով. Ը. 17):

Ուրեմն պէտք է արթուն մտքով այս
առաքինութիւններուն մէջը հաստատիլ
անշարժ, անյաղ փափագով ասոնց սլըւ-
լըվիլ, ու ասոնց սիրովը վառվիլ սրտանց,
և ահա՛ այս ընթացքով՝ կ'ըլլայ մարդս
շնորհաց ընդունակ, և ընդունակ ըլլալովը՝
կը լըլի երկնահոսան բարիքներով ու ձրի
պարգևներով, և լըլելովը՝ կարող կ'ըլլայ
զարմանալի առաքինութիւններ գործելու,
և առաքինական մեծամեծ գործքերով՝ կ'ըլ-
լայ այս աշխարհիս մէջ երեւելի ու երջա-
նիկ, և այսպէս ել ջանիկ կ'էնդով մը՝ կը
փառաւորի հողին՝ փրկութեան վիճակին
մէջ գտնըվելուն համար, ու խղճմտանքի

խայթոցէն ազատ մնալուն պատճառաւ,
 և այն փրկութեան վիճակաւ՝ մեռնելէն
 ետքը՝ ուրախ սրտով ու բերկրեալ հոգ-
 ւով կ'անցնի կ'երթայ երանաւէտ կենաց
 ու յաւիտենական փառաց մէջ. և այն երա-
 նաւէտ կեանքով կը զմայլի ու կը վայելէ
 Աստուածային անթառամ փառքը, ու
 մեր Տէր Յիսուս Քրիստոսի ամենացանկա-
 լի և անճառելի փառաւորութիւնը՝ յաւի-
 տեանս յաւիտենից:

Ուրեմն եկէք յօժար կամօք հոգ տա-
 նինք ու ջանք ունենանք խորհուրդներ-
 նաւս, խօսքերնուս և գործքերնուս մէջ
 բարի ըլլալու, ինչպէս որ Առաքեալն ալ
 մեզ կը յորդորէ:

Խորհինք Աստուածային բաները, խօ-
 սինք՝ ընկերներնաւս շահաւոր և օգտա-
 կար եղած բաններուն վրայով՝ և հոգիներ-
 նուս պայծառառացուցիչ խօսքերը, եւ
 քաշվինք գէշ ու ծուռ գործքերէն ու վար-

քերէն, ու հետեւինք առաքինական և բարեպաշտ գործքերու:

Որ չըլլայ թէ՛ այն երկնային շնորհքնե-
րէն ետ մնանք ու զըրկը վինք, և մեր թու-
իութեամբը և տգէտ կամքովնիս՝ չըլլայ
որ պարապ երթայ և անպտուղ ըլլայ մեր
վրայ՝ Աստուծոյ բարերարութիւնները, ան-
չափ պարգեւները, և անհամար շնորհք-
ները, որ ինքը առատ առատ կը պար-
գեւէ մեզի ձրիաբար՝ մեր փրկը վելուն յա-
տուկ միջնորդ և օգնական ըլլալու մը
պէս:

«Զգոյշ լինուք գուցէ որ յետնեալ գտա-
նիցի՝ ի շնորհացն» (Եբր. Ժբ. 13):

«Գովծակից եմ ձեզ և ազաւեմ, մի՛
ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունիլ
ձեզ » (Բ. Կորն. զ. 1):



Գ Լ ՈՒ Խ Ժ

Ի՞նչ ինչ են՝ Քրիստոսի Եկեղեցւոյն
յատուկ նշանները:

Քրիստոսի Եկեղեցւոյն ճշմարիտ ըլլալը
յայտնի կ'երեւայ. և իրաւամբ այն կ'ըսվի
Քրիստոսական Եկեղեցի, որ ունի այս չորս
գլխաւոր նշանները՝ իր գերազանց կատա-
րելութիւնը ցուցունող:

Որոնք կը գնենք այս տեղ սրբազան և եկե-
ղեցական գրքերէն առնելով ճիշտ, և մեր
ուղղափառ դաւանութեամբը, որ ասոնք
են. միութիւն, սրբութիւն, ընդհանրա-
կանութիւն, և առաքելականութիւն. ինչ-
պէս որ չորսն ալ մէկէն առնելով՝ կը կար-
դամք մեր ժամագրքին մէջ. «Վասն միայ-
նոյ սուրբ կաթողիկէ և առաքելական Եկե-
ղեցւոյ»:

Քրիստոսի Եկեղեցին էն առաջ Միութեան նշանը ունի. որովհետեւ զանազան պատճառներով և վայելուչ խորհրդով մի է Յիսուս Քրիստոսով, որ մէկ հատիկ բանաւոր հօտի մը պէս՝ կը խնամի ու կը պաշտպանուի մէկ հատիկ քաջ և ամենակարող հովիւ Յիսուսին ձեռքովը, որ իր անձը զրաւ իր ոչխարներուն վրայ:

Քրիստոսի Եկեղեցին՝ այսինքն հաւատացելոց բազմութիւնը՝ թէպէտ տարածված ու ցրված կ'իրեւան բոլոր աշխարհիս ամէն կողմերը՝ զանազան ազգերով ու շատ տեսակ լեզուներով զատված, բայց մէկ են Քրիստոս Յիսուսով, որովհետեւ Եկեղեցին մէկ ամբողջ մարմին մըն է խորհրդական, որ պէս պէս ուղղափառ հաւատացեալներէ՝ իբր թէ զանազան անդամներէ բաղկացած, և այն մէկ հատիկ ճըշմարիտ գլուխին այսինքն Քրիստոսին հետ կապված է. Եւ ձայնի իմում լուիցեն.

և եղեցին մի հօտ և մի հովիւ » (Յօհ. Ժ. 16)

« Որպէս մարմին մի է, և անդամս բազումս ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին են, նոյնպէս և Քրիստոսն »:

« Այլ դուք մարմին Քրիստոսի էք և անդամք յանդամոց նորա » (Ա. Կորն. Ժբ. 12. և 27):

Քրիստոսի Եկեղեցին իր ամենագովելի միութիւնը կը ցըցունէ՝ մկրտութեամբ հոգեւորապէս նորէն ծնանելուն մէջ. որ ազգաւ ու լեզուով ու տեղով մէկգլմէկէ հեռու ըլլողները՝ աս բանին մէջ հոգեւորապէս կը միանան Քրիստոսի մի և նոյն շնորհական նմանութեամբ, և Աւետարանական վարդապետութեան մի և նոյն ճրշմարիտ հաւատքով, և սուրբ Հոգւոյն մի և նոյն կենդանաբուղի աղբիւրէն կը խմեն ամէնքն ալ՝ շնորհաց անմահարար բաժակը. ամէնքը ալ մի և նոյն կերպով որդեգիր և

Ժառանգ կը դրվին մի և նոյն Հօր Աստու-
ծոյ երկնաւորի, և ամէնքը մէկէն հրա-
ւիրված կ'ըլլան երկնային փառաց և յաւի-
տենական անմահ կենաց մէկ հատիկ
յուսոյն:

Եսայեայ մարգարէութիւնը խորհր-
դական յարմարութեամբ կատարուած
կերեւայ այս բանին վրայ (ԼԲ. 39):

Ահա՛ Նկեղեցին՝ այսինքն զանազան
հաւատացեալ ազգերը՝ շատ տեսակ ազ-
գային ծէսերով, արարողութիւններով
տարբեր սիրտ ունին «սիրտ այլ», բայց
մի և նոյն ճշմարիտ և ուղղափառ հա-
ւատքով և դաւանութեամբ՝ ու Քրիս-
տոսէն աւանդեալ սրբացուցիչ և կենդա-
նարար խորհուրդներուն միօրինակ ներ-
գործութեամբը՝ ամէնուն ճանապարհը մէկ
է « ճանապարհ մի », որ զամէնն ալ միօրի-
նակ կերպով կը տանի դէպ 'ի Աստուա-
ծային փառաց յաւիտենական երանու-

Թիւնը, ինչպէս որ այս վկայութիւններ ու
յայտնի կ'երեւայ այս ըսածներս:

«Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ,
այլ և վասն ամենայն հաւատացեալոց բա-
նիւն նոցա յիս. զի ամենեքին մի իցեն,
որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ. զի
և նոքա 'ի մեզ իցեն» (Յօհ. Ժէ. 20):

«Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք,
զՔրիստոս զգեցեալ էք. չեք խտիր՝ ոչ
հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի, և ոչ
ազատի. ոչ արուի, և ոչ իգի. զի ամենե-
քին դուք մի էք 'ի Քրիստոս Յիսուս» (Գաղ.
դ. 27):

«Մի մարմին և մի հոգի. որպէս և կոչե-
ցարուք 'ի մի յոյս կոչման ձերոյ: Մի է
Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն» (Եփես.
դ. 4. 5):

Բայց եկեղեցւոյ միաբանական սիրոյն
միութեանը վրայօք՝ կը թողու՞մ որ հո-
գեզգոն խմաստունները ի որհնին, որ իրաւ

այս սուրբ սէրը՝ մագնիսական զօրութենէն
առաւել զքանչելի կերպով՝ Եկեղեցւոյ այլ
և այլ ու որոշված անդամները իրեն քա-
շելով, մէկգմէկու կը մօտեցընէ ու կը կա-
պէ մի անձն և մի հողիի պէս, և մէկ մար-
մին ընելով զամէնքը՝ մի միայն Քրիս-
տոս գլուխին հետ կը միաւորէ:

Երանի՛ անոնց, որ կը յարգեն այն միա-
բանական սուրբ սէրը. երանի՛ անոնց,
որոնք կը յօժարին այս անարատ բաժակը
ըմպելու, որուն լեցընող բաժնողը՝ Սէր տ-
նուն Յիսուսն է:

Երանի՛ անոնց, որ այս միաբանական
«իրով հաստատված են կենդանի ճիւղի
պէս այն ճշմարիտ որթին վրայ, որ է
Յիսուս Քրիստոս. որ անոր Յստուածային
զօրութեանը հաղորդ եղած ըլլալով, զանա-
զան առաքելութիւններու առատ պտուղ
ներով կ'աճին ու կը զարդարին (Յօհ.

Ժե. 5) :

Ուր որ կը տիրէ Քրիստոսէն նուիրված
այս սուրբ սէրը, այն տեղ նախանձ
չկայ. ո՛չ ալ մէկը մինակ իր անձինն պա-
տիւր և գովութիւնը կը փնտրուէ. ոչ
մեծամտութիւն կայ՝ ու ո՛չ հպարտու-
թիւն. ո՛չ անամօթ համարձակութիւն,
ո՛չ ալ ինքնահաւանութիւն. այլ միշտ
բարի յօժարութեամբ՝ ընկերին լաւու-
թիւնը ուզել, և ամէն մարդ ամէն մարդու
հետ խաղաղութիւն ունենալ:

Այն տեղ կը փայլի հեղութիւն և
սրտի խոնարհութիւն. այն տեղ կարօ-
տեալներու վրայ գթութիւն և խնամա-
ծութիւն կը ծաւալի, կը փախչի այն
տեղէն անիրաւութիւնը ու ստութիւնը,
ու կը թազաւորէ արդարութիւնը ու
ճշմարտութիւնը: Ի՞նչ երկարացնեմ
խօսքս, եկեղեցւոյ այս միաբանական
սէրը՝ մեզ չէ թէ միայն մահուանէ

ազատելով՝ դէպ 'ի յաւիտենական երա-
նաւէտ կեանքը կը տանի, ու մեղաց խա-
ւարէն հանելով՝ դէպ 'ի շնորհաց և արդա-
րութեան ամենապայծառ լոյսը կը հաս-
ցնէ, այլ մեզ ծայրագոյն բարութեան հա-
ղորդ ալ կ'ընէ. Աստուծոյ հետ կը միա-
ւորէ, ու դէպ 'ի Աստուած կը վերցընէ
մեզ:

Այս ամէնը տես, ու միտք առնելո
կարդա՛ Ա. կորն. Գլ. Ժգ. 4 համարին
մէջ՝ մինչև 6 համարը, ու Ա. կաթու.
Յովհ. գ. Գլ. 14 համարին ու դ. Գլ.
16 համարին մէջ:

Այս սիրոյ միութեան Քրիստոսադրոշմ
նշանով կը ճանչցվի Քրիստոսի եկեղեցին,
ասով բոլոր ուղղափառ հաւատացեալ-
ները մէկ սիրտ մէկ հոգի կ'ըլլան անանկ
որ՝ ո՛չ տեղերու հեռաւորութիւնը և ո՛չ
ազգաց զանազանութիւնները կրնան զա-
տել անոնք մէկմէկէ. որովհետև այս

սուրբ միութեան ամուր կապովը կապ-
ված են:

Նաև Աստուածահաճոյ և ամենաբաղցր
պտուղներ կուտայ այս սուրբ սիրոյ ծառը,
որ մինչև երկինքը բարձրացած է և Աս-
տուծոյ ամենահար ձեռքովը անկրկնած է
սուրբ Եկեղեցւոյ պարտիզին մէջ. որուն
հաստատութեամբ արմատանալը աւանուշ
պտուղներով լեցվիլը կ'ուզէ: «Զի դուք եր-
թայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն
ձեր կացցէ»:

«Զայս պատուիրեմ, զի սիրեսձեք զմի-
մեանս» (Յօհ. Ժե. 16, 17):

«Զի սէրն՝ զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ
և ես ի նոսա» (Յօհ. Ժէ. 26):

«Եւ բազմութեան հաւատացելոց էր սիրտ
և անձն մի» (Գործ. գ. 32):

Քրիստոսի Եկեղեցւոյն կատարելութեան,
երկրորդ նշանը՝ սուրբ բլլալն է. և
այս շատ պատճառներով հաստատ կ'ե-

բեւայ, որոնցմէ գլխաւորները դնենք այս
տեղ :

Նախ՝ Քրիստոսի սրբութիւնովը, որով
հետեւ Քրիստոս Նկեղեցիին գլուխն է, ինչ-
պէս որ Առաքեալ կ'ըսէ, և նոյն ինքն
բնութեամբ և էութեամբ սուրբ է, և
բոլորովին սրբութիւն, և ահա՛ այս ամե-
նամաքուր սրբութեան հաղորդ եղաւ Ն-
կեղեցին՝ այսինքն հաւատացեալները, ըստ
որում բարոյական մարմիններն է՝ իր սրբ-
բազնասուրբ գլխոյն հետ միացած, այ-
սինքն Յիսուս Քրիստոսին հետ: Ուստի թէ
որ Նկեղեցւոյ անդամներէն մէկը՝ Քրիս-
տոնէական ճշմարիտ և սուրբ հաւատոյ
ուղղափառ դաւանութեամբ՝ անբաժա-
նելի մնայ իր սրբարար ու ճշմարիտ գլու-
խէն՝ այսինքն Յիսուս Քրիստոսէն, ամե-
նեւին հերետիկոսութեան մէջ չմտնու-
լով՝ և սոսկալի ուրացութեան մէջ չիճնա-
լով, անշուշտ ունի անիկայ Քրիստոսի

անապական սրբութիւնը՝ այս հաստատ
վկայութիւններով: «Որ ծնանելոցն է 'ի
քէն՝ սուրբ է» (Ղուկ. ա. 35):

«Եւ դուք սուրբ էք՝ այլ ոչ ամենեքին
(Յոհ. ժգ. 10):

«Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւո
րութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ
ժողովուրդ սեպհական» (Պետ. Ա. Կաթու.
բ. 9):

«Եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է 'ի Կորն
թոս՝ նուիրելոց 'ի Քրիստոս Յիսուս, կոչե
ցելոց սրբոց՝ ամենեքումք հանդերձ, որ
կարդան զանուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի յամենայն տեղիս նոցա եւ մեր»
(Ա. Կորն. ա. 2):

Երկրորդ՝ Ճշմարիտ հաւատոյ սրբու
թիւնը ունի եկեղեցին, որովհետեւ ընդու
նաժ է Աստուածային Աւետարանական
պատգամները ուղղափառ մտքով ու անա
րատ խորհուրդով, որ այն սուրբ պատ

գամները մաքերնիս կը բանան՝ ճշմարտութիւնը ճանչնալու, և կամքերնիս կը յօժարեցընեն բարի գործքերու. ու սրտերնուս և հողինուս մէջէն դուրս հանելով անմաքուր խղճմտաւքները և չար խորհուրդները, զմեզ սուրբ տաճարներ կընեն Աստուծոյ բնակութեանը համար. որովհետեւ՝ Տէր Աստուծոյ խօսքերը՝ սուրբ խօսքեր են. Բանք տեառն են բանք սուրբ՝ որ սուրբ կ'ընեն զամէն ընդունողները: «Սուրբ արա՛ զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է» (Յօհ. Ժէ. 17):

«Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ» (Յօհ. Ժե. 3):

«Եւ ոչինչ ընտրութիւն արար 'ի մէջ նոցա և մեր, հաւատովք սրբեալ զսիրտ նոցա» (Գործ. Ժե. 9):

«Տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք» (Ա. Կորն. Գ. 17):

Երրորդ՝ մկրտութեան սրբարար խորհրդովը սուրբ է Եկեղեցին. որով կը մաքրւին հոգիները մեղքի աղտեղութենէն. ու սուրբ վամանի պէս՝ Աստուածային զանազան շնորհքները ընդունելու կը պատրաստուին. կամ սուրբ կոյսի մը պէս՝ դէմը կ'ելլան անմահ և երկնաւոր փեսային՝ որ է Յիսուս Քրիստոս, ու կը հրաւիրվին լուսեղէն և եկկեային առաքատը մանալու համարձակ, այսինքն արքայութեան յաւիտենական փառքի մէջ:

Ուստի անոնք որ ունին մկրտութեան խորհրդոյն սրբութիւնը, ու այն հոգեւոր ծնունդը, որով Հօր Աստուծոյ որդեգիր, և երկնային փառաց ժառանգ կ'ըլլան, Քրիստոսի Եկեղեցին կը սեպվին:

«Եթէ ոչ դք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» (Յօհ. 4. 3):

«Որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի,

և զանձն իւր մատնեաց վասն նորա, զի
զնա սրբեսցէ, սրբութեամբ աւագանին բա-
նիւ, զի կացուցէ ինքն իւր յանդիման
փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի արատ
ինչ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ
յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ և անա-
րատ » (Եփես. ե. 25):

Արդ՝ որովհետեւ ամենասուրբն Աստ-
ուած իր բարերար մարդասիրութեամբը
հաճեցաւ մեզ կոչելու, և այսպիսի սրբա-
ցուցիչ խորհուրդներու մէջ հաստատելու,
և մեզաց աղտը մեր վըրջէն մաքրելու,
և հոգիներնուս տգեղութիւնը՝ իր Աստ-
ուածային մաքրութեանը ու սրբութեանը
դարձրնելու, ուրեմն մենք ալ պարտական
ենք՝ մոլութեանց չար գործքերը մեր վրա-
յէն մէկզի նետելու, ու առաքինի բարե-
գործութիւններով վարքերնիս շտկելու, ու
վարուց և գործոց սրբութիւնը ձեռք բե-
րելու, որով յաւիտենական վատքը՝ և Յիւ-

«**ՅՈՒՆ** Քրիստոսի երանութիւնը ժառանգելու արժանի ըլլանք, ինչպէս որ կը յորդորէ մեզ սրբազան Առաքեալն Պետրոս:

«**Այլ** ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, և դուք սուրբք յամենայն զնացս ձեր լինիջեք» (Պետ. Ա. Կաթող. ա. 13):

Քրիստոսի ճշմարիտ Նկեղեցւոյն երբորդ նշանը Կաթողիկէ ըլլալն է. որ յունարէն իբրումէնիքի կամ գաթօլիկի կ'ըսվի. և մեր լեզուով տինդերական և ընդհանուր կըթարգմանուի. որովհետեւ ուղղափառ և ճշմարիտ հաւատքը՝ ու աւետարանի ողջամիտ վարդապետութիւնը՝ ու Քրիստոնէական սուրբ կրօնը՝ բոլոր աշխարհ տարածված, ու ամէն լեզուով ամէն ազգաց քարոզված է:

Ուստի՝ ուր որ և որ ազգի մէջ որ ընդունած է մէկը այս ուղղափառ հաւատքին վարդապետութիւնը, և անոր մէջ անխախտ կըմնայ հաւատոյ հանգանակին դա-

ւանութենէն դուրս չելելով, ու Աստուածաշունչ սուրբ զըքին՝ այսինքն հին և նոր կտակարաններուն լուսաւոր և հաւատարիմ մեկնութիւնը ընդունեն ու, ու Աստուածադուամար սուրբ ժողովքներուն մէջ շողւով սրբով ճվռված խօսքերուն վրայ, ու սրբազան հայրապետաց գրուած քննրուն վրայ հաստատուելով, անանկ մարդը՝ իրաւամբ կրնայ սեպվիլ ու ասվիլ՝ Կաթուղիկէ Եկեղեցւոյ զաւակ. որ ուղղափառ հաւատքի մէջ անմոլար ըլլալովն ալ՝ կ'ըսվի ուղղափառ, որուն կըսեն յոյները՝ օրթոտօքսոս :

Ուրեմն Քրիստոսի Եկեղեցին՝ ու անոր անդամները անոնք են որ՝ հաստատ և տաւանց մոլորելու կեցեր են այն սուրբ հաւատքին մէջ, որ ճշմարիտ հաւատոյ հեղինակը Յիսուս Քրիստոս սորվեցուց և իբր շնորհքովը բոլոր աշխարհ տարածեց անանկ որ՝ զժողովին դուռները չեն կրնար յաղ-

Թեւ այն :

«Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց. որ հաւատայ և մկրտեսցի, կեցցէ՛. և որ ոչ հաւատայ՝ դատապարտեսցի» (Մարկ. Ժե. 15):

«Ասան յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս, զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին՝ որ եհաս առ ձեզ, որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբերէ, որպէս և 'ի միջի ձերում» (Կողոս. ա. 5):

«Այլ յամենայն ազգս՝ որ երկնչին 'ի նմանէ, և զործէ զարդարութիւն, ընդունելի է նմա» (Գործ. Ժ. 35):

Քրիստոսի Եկեղեցւոյն կատարելութեան չորրորդ նշանը՝ Առաքելական ըլլալն է. այսինքն՝ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին այն է որ՝ սրբազան Առաքելոց ճշմարիտ վարդապետութեան և քարոզութեան հի-

մին վրայ անխախտ և անշարժ հաստատ-
ված է, ու անոնց աւետարանական աւան-
դութիւնները անխափան պահած է:

Զրօնք թէ՛ Առաքելոց վրայ հաստատված
է Եկեղեցին, այլ անոնց վարդապետու-
թեանը ու դաւանութեանը վրայ. որով-
հետեւ ճշմարիտ հաւատոյ բուն հեղինակը՝
բացարձակապէս Քրիստոսն եղաւ, և այն
է՛ Եկեղեցին կանգնեցնող առաջին և մըշ-
տնջեցնաւոր հիմը, ինքը՝ իր կենսածիր
վարդապետութիւնները անմիջաբար՝ իրմէն
աւանդելով, և շնորհաբուղիս օրէնսդիր
լինելով. ինչպէս որ՝ կ'ըսէ, «Եւ մի՛ կոչեք
ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է»
(Մատ. իգ. 10): «Զի հիմն այլ ոչ ոք
կարէ դնել քան զեղեայն՝ որ է Յիսուս
Քրիստոս» (Ա. Կորն. գ, 11):

Բայց սուրբ Առաքեալները՝ Քրիստոսի
ճշմարիտ հաւատքին քարոզիչ եղան, և
Եկեղեցւոյ այս հրաշալի հիմնարկութեանը

վարպետ դործակալներ և սպասաւորներ
եղան:

Այս բանին վրա յայտնի կը խօսի Հայր
Գաբրիէլը՝ Պօղոսի Թղթոց մեկնութեանը
մէջ՝ (Բ. Հատոր. յերես. 533). ըսելով թէ՝
«Զի առաքեալքն ո՛չ ըստ անձանց իւրեանց
կամ ըստ զօրութեան եղեն հիմն եկեղեցա-
կան շինուածոց, այլ ըստ վարդապետու-
թեանն՝ զոր քարոզեցին»: Եւ դարձեալ այն
գրքին մէջ՝ 534 երեսը՝ կ'ըսէ. «Միայն Ա-
ռաքեալք և Մարգարէք կոչին հիմունք
Եկեղեցւոյ. այսինքն իբրեւ պաշտօնեայք
հիմնարկութեան նորա՝ ի ձեռն վարդապե-
տութեան իւրեանց և վկայական ջանից՝ ի
տարածանել զհաւատս Եկեղեցւոյ. ապա
թէ ո՛չ՝ առաջին և վերամբարձող հիմն՝
մշտնջենաւոր և բացարձակ՝ է միայն Յի-
սուս Քրիստոս» :

Սրբազան Առաքեալները՝ չէ թէ Մար-
գարէներուն պէս մութ օրինակներով ու

զալու բաներուն վկայութեամբը ցուցու-
 ցին մեզի փրկչին Քրիստոսի շնորհական
 օրէնքը, այլ անձամբ ու բնակութեամբ
 անոր հետը ըլլալով, և անոր Աստուա-
 ծային հրաշքները աչքովնին տեսնելով, և
 անոր կենսաբուղի խօսքերը ականջովնին
 լսելով, արձակ համարձակ վկայութեամբ
 քարոզեցին բոլոր աշխարհ անոր ճշմարիտ
 հաւատքը, ու անմահ կենդանութեան ա-
 լետարանը: Ուստի՛ որ հաւատացեալ ու
 մկրտեալ ազգը ըլլա՛ թող ըլլա, ան որ
 անխախտ հաստատված կեցեր է Առաքե-
 լական քարոզութեան աշխարհատարած
 վարդապետութեան ու դաւանութեանմէջ,
 ճշմարտապէս կ'ըսվի Առաքելական Եկեղե-
 ցի: Ինչպէս որ աս վկայութիւնները շի-
 տակ մտքով քննողներուն յայտնի է: «Գնա-
 ցէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն
 հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր՝
 և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ, ուսուցէ՛ք նո-

յա պահել զամենայն՝ զոր ինչ պատուի-
րեցի ձեզ» (Մատ. ԻԸ. 19):

«Այլ Աստուծոյ շնորհք՝ որ յամենայն
հռչակ հարկանէ զմէնջ 'ի Քրիստոս Յի-
սուս. և զհոտ գիտութեանն իւրոյ յայտ-
նի առնէ մեօք յամենայն տեղիս» (Բ. Կորն.
Բ. 14):

«Զոր տեսաքն և լուսաք՝ պատմեմք և ձեզ,
զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ
մեզ. և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր
և ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստո-
սի» (Յօհ. Ա. Կաթու. ա. 3):

Ուստի՝ Աստուծոյ զանազան շնորհք-
ները քանի որ հեղեղներու պէս այսչափ
առատ կը վազեն, չըլլայ որ մենք զուրկ
գտնվինք անոնցմէ, ու ծակ սափորի պէս
ամաններնիս չլիցընենք: Արովհետեւ աշ-
խարհասէր մարդուն սիրտը զանազան մո-
լորութիւններով ու մարմնաւոր հեշտու-
թիւններով ծակ ծակ ու կոտրած է. ու

չէ թէ ամբողջ է Աստուածսիրութեամբ և բարեգործութեամբ, անոր համար չի կրնար ընդունիլ երկնաւոր ու հողեւոր բարիքները:

Զըլայ որ ազահութեամբ ու ժլատութեամբ ողորմութիւնը խնայենք աղքատներէն ու մեր կարօտեալ եղբայրներէն, որ մենք ալ պարապ ետ չըդառնանք շնորհք բղխող կենաց աղբիւրէն՝ այսինքըն Յիսուս Քրիստոսէն. ինչպէս որ այն ազահ և արծաթասէր երիտասարդը՝ սիրտը իր ունեցած հարստութեանը վրա փակցուցած ըլլալով՝ չուզեց աղքատներուն ողորմիլ. և անոր համար ինքիւրէն զատվեցաւ ու օտարացաւ այն ծայրագոյն բարիէն՝ որ է Յիսուս Քրիստոս. ու երկրաւոր հարստութիւնը՝ երկնից արքայութեան յաւիտենական փառքէն վեր սեպկով՝ զըկվեցաւ ձրի շնորհքներու անհատնում գանձերէն. որ ոչ կըբողբովի, և

նչ կըկորսըվի (Մատ. ԺԹ. 22):

Աւրդ՝ Քրիստոսի մեր բարերար փրկչին այսչափ անթիւ սրբարար շնորհքներովը՝ յարմարենք մեր ցործքերը իր Եկեղեցւոյն պանծալի նշաններուն, որով արժանապէս ըլլանք Եկեղեցւոյ անդամներ՝ և Քրիստոսի բարոյական մարմին. ու Աստուածային խաղաղութեան և սուրբ սիրոյ կապովը միացած՝ մի սիրտ և մի հոգի ըլլանք:

Բանակոիւ ու վիճաբանասէր չըլլանք այնպէս անօգուտ խնդիրներու վրայ, և մեր մտացածին կարծիքներուն վրայ, որ անով՝ չէ թէ միայն կըզարնըվինք իրարու հետ. ու մէկզմէկու սիրտը կըծակենք, այլ փուճ վիճաբանութիւններով անմիաբան՝ և անհաշտ թշնամի ըլլալով իրարու, կերպ կերպ զայլթակողութիւններով ու շփոթութիւններով հոգեւորապէս կըկործանենք մեզ մշտիկ ընողները. որ այսպիսի բաներէն կ'արդիլէ մեզ Առաքեալը, և Եկեղեցւոյ Հայ-

բերը, որոնք մեզի սորվեցուցին՝ խաղա-
ղութեան հոգիով ու սիրով վառվել, և
անանկով՝ ճշմարտութեան խօսքերը շե-
տակ հասկընալ ու շիտակ հասկըցնել ուն-
կեցրին, և Աստուածային սիրոյն բորբո-
քը վառուած պահել սրտերնուս մէջ՝ Հոգ-
ւոյն սրբոյ շնորհքովը (Տիմոթ. բ. 14:
Մատ. ժբ. 19: Յօհ. ժե. 12):

Ամենևին մէկզմէկ սիրելէն ետ չմնանք
որ պտղաբեր լինի ներսիդինիս այն միծ
սէրը՝ որ անով սիրեց մեզ՝ մեր կենարարն
Յիսուս: Գիտնանք՝ թէ այն որ պիտի սի-
րենք, մեր եղբայրն է. ամէն ստեղծուած
ներէն աւելի՛ սիրականն է Աստուծոյ, մա-
նաւանդ որ՝ Աստուծոյ որդւոյն պատուա-
կան արիւնովը ծախու առնըված է:

Ուրեմն բնաւ ետ չմնանք եղբայրսի-
րութենէն, որ Աստուածսիրութեան կնիքը
չաւրըվի ներսիդինիս:

Թէ որ եղբայրնիս չսիրենք, զԱստուած

չօիրած կ'ըլլանք, անոր համար՝ զգուշա-
նալու ենք՝ որ չըլլայ թէ ոխակալութիւ-
նով անոխակալ Աստուծոյ լուսեղէն պատ-
մուճանը հանենք հոգիներնուս վրայէն, ու
հագնինք ոխակալ բանսարկու սատանային
սև ու կորստեան անարգ հանդերձը:

Զըլլայ թէ նախատական խօսքերով խո-
ցենք մէկզմէկու ուրաք, որ դժուարի կրա-
կին յաւիտենական դատապարտութեանը
պարտաւոր չըլլանք:

Միաբանական սէրը մեծարե՛նք մէջեր-
նիս, ու Քրիստոնէութեան պարծանաց յա-
տուկ դրօշակի մը պէս՝ համարձակ առջե-
նուս կրենք զանիկայ (Յօհ. Ժգ. 35: Գործք.
բ. 1) :

Մաքրե՛նք սրտերնուս մէջէն ամէն մեղ-
քերը, որովհետև սուրբ սիրտը՝ մաքուր
խղճմտանքը՝ ու բարեխորհուրդ միտքը՝
Աստուածային շնորհքով ու փառքով զար-
դարված կ'ըլլայ, ու Հոգւոյն սրբոյ բնա-
կարան կը պատրաստըվի:

Ի՞նչ շահ կայ ինձի՝ Նկեղեցիին Սուրբ եղած ըլլալուն նշանէն, թէ որ ես ա- նոր մասն ու անդամը ըլլալով՝ զիզեմ ու լեցընեմ սրտիս մէջ բազմատեսակ մոլու- թեան ախտեր, և հոտած մեղքեր. ի՞նչ պէս ան ատենը կրնամ համարձակիլ՝ Քր- րիստոսի Նկեղեցւոյն սրբանուէր անդամը կոչիլի:

Թէ որ ես բիւրաւոր չարագործու- թեանց յանցանքներու մէջ ընկղմած ըլ- լամ իմ բոլոր սիրտս, միթէ հոգիս բե- հեզեայ պատմութեաններով ու ծիրանի ըզ- ղեստներով կը զարդարվի. չէ որ պէս պէս մարմնաւոր զարդերը՝ ազնիւ ու անուշա- հոտ իւղեր քսվիլը՝ ու անցաւոր զուար- ճութիւններու հետեւիլը՝ դուրսէն զար- դարված գերեզման մը կ'ընեն հոգին. ու- թոնք դրսէն զեղեցիկ կ'երևան մարդոց աչ- քին, բայց ներսէն լեցված են չարու- թիւններով, ու ատելի են Աստուծոյ առ-

ջԼԸ (Մատ. իգ. 27: Հռովմ. ժբ. 1):

Առաքինի վարքով ու ողջ միտքով հը-
նազանդինք ու հետեւինք Քրիստոնէական
ճշմարիտ վարդապետութեան, որ բոլոր
աշխարհ տարածված է, ու Աստուածա-
յին գիտութեան լուսովը վառված լապ-
տերի մը պէս կը փայլի ամէնուն աչքին
առջևը. որ այն լուսաւորութեամբ՝ հա-
ւատքի գաղտնիքները երևան կ'ըլան, և
զմեզ՝ դէպ 'ի լուսաւոր վարուց և առա-
քինի դործոց՝ եաւահանգիստը կ'առաջ-
նորդեն. և այնպէս հոգինիս այն վիճակին
մէջ՝ այնուհետեւ ապահով կը մնայ մե-
զաց խաւարին մէջ իյնալէն, ու կենդանի
վէմերու պէս կ'ըլլանք հոգեւոր տաճար-
ներ, ու Աստուածային փառքը կ'երևայ
վրանիս մեզ զարդարած, և այնպէս կը
զօրանանք մեր չար կիբքերը յաղթելու,
և Եկեղեցւոյ բարի ու առողջ անդամները
ըլլալու: Բայց մոլորեալները իրաւամբ

կ'ըսվին չար ու անտաւոր անդամ Եկեղեցւոյ:

Ուղղափառ հաւատոյ այս ընդհանուր տարածութիւնը ամենեւին չթուլցրներ մեր սիրտը, այլ մեզի սիրտ կուտայ, թէ բոլոր աշխարհի մէջ մօտ է ու կ'օգնէ մեզի մեր Տէր Յիսուս Քրիստոսը, և մեր տկարութեանը թե թիկունք կ'ըլլայ:

Այս տիեզերասահման հաւատոյ ճշմարտութիւնը՝ մեծ ու լայնատարած տաղաւարի մը պէս իր տակը կը պարունակէ զանոնք, որ իրեն կռթնած և ուղիղ սրտով իրեն ապաւինած են. ու աներկիւղ և ապահով կ'ընէ զմեզ ամէն պատահարներէն՝ և մեր հոգւոյ թշնամիին բռնութիւններէն (Յօհ. Ը. 32. 10. Ժա. 6. Հռով. Ժ. 12):

Մէկզմեկու աղէկութիւնը մտմտանք, եղբայրներնուս և ընկերներնուս՝ բարի վարքով օրինակ ըլլանք. մէկզմէկ առաքինաւ

կան գործքերու յորդորենք, առաքինու-
թեան հայելի ըլլան գործքերնիս ու վար-
քերնիս. սուրբ առաքեալներուն նմանինք
խօսքով ու գործքով, սիրով և խաղաղու-
թեամբ. չէ թէ ճշմարտութեան քարո-
զիչ ըսվելու միայն՝ ցանկանք, այլ նոյն
ճշմարտութիւնը ամէնուն առջեւ գործ-
քով մեծարելու ալ ջանք ունենանք. աւե-
տարանական կենսաձիր խրատները բերնով՝
լսել տալու չնայինք այնքան, հապա նա-
յինք որ՝ գործքով տարածենք զանիկայ՝
ամէնքը դէպ 'ի անոր յորդորելու համար:

Վասն զի լոկ նշանով, կամ Առաքելոց
ուղեղ դաւանութեան կեիքը ունենալով՝
թէպէտ կրնանք անուանիլ Առաքելական
եկեղեցի. բայց չենք կրնար՝ Առաքեալնե-
րուն պէս հաճոյ ըլլալ մեր Տէր Յիսուս
Քրիստոսին, և անոր փառացը և երանու-
թեանցը ժառանգակից ըլլալ:

Զի ի՞նչ օգուտ է որ՝ Առաքելոց ուղեղ

դաւանութիւնը և ողջամիտ վարդապետութիւնը դաւանինք, ու գէշ չ'արք ունենանք :

Ուրեմն խօսքերնիս ու գործքերնիս սուրբ Առաքելոց խօսքերուն ու գործքերուն յարմարենք, որ արժանապէս և իրաւամբ անուանինք Առաքելական Նկեղեցի. և գործքով՝ Քրիստոսի հետևող ըսվինք և անոր անուանը փառաբանիչ ըլլանք ուղիղ հաւատքով և բարի գործքով (Մատ. ե. 16: Փիլիպ. գ. 17):



Գ Լ ՈՒ Խ Ժ Ա.

Եկեղեցւոյ եօթն խորհուրդները:

Ի՞նչ է խորհուրդը:

Խորհուրդը կը նշանակէ գաղտուկ բան մը. որ երկու կամ երեք հոգիի մէջ ծածուկ կը ֆնայ. ինչպէս որ մեր փրկութիւնը խորհուրդի մը պէս գաղտուկ պահված էր Ամենասուրբ Երրորդութեան կամացը մէջ: «Զխորհուրդն՝ որ ծածկեալ էր ՚ի յաւիտենից և յաղագաց» (Կողոս. ա. 26):

Խորհուրդ կ'ըսվի այն գործին, որ անոր մէջ գաղտուկ միտք մը կ'երևայ. ինչպէս որ՝ երբոր կը տեսնանք յայտնի բաներուն մէջ մէկ գաղտուկ բան մը, կ'ըսենք թէ՛ խորհուրդ կայ այս տեղ. իբր թէ՛ ուրիշ բան կը տեսնենք աչքով, և ուրիշ բան կը հաւատանք անոր մէջ մտքով: Ուստի Եկեղեցւոյ եօթն սրբաբար գործողութիւնները՝ վայելուչ կեպով ըսվեցան «խորհուրդ»:

Վասն զի այս փրկարար խորհուրդներուն զգալի ու նիւթական արարողութիւններուն մէջ՝ այսինքն, գինիին, հաղորդութեան նշխարին, մկրտութեան ջրոյն, միւռոնին ու խորհուրդներուն բոլոր հարկաւոր նիւթերուն մէջ՝ շնորհքներու ծածուկ և աներևոյթ զօրութիւններ ըլլալը կը հաւատանք :

Արդ՝ խորհուրդ ըսելով, կը տարբերի հին օրինաց նշաններէն. որովհետեւ հին օրինաց արարողութիւնները նշան էին՝ ու չէ թէ խորհուրդ. վասն զի չունէին սրբաբարար զօրութիւն մը. ինչպէս որ թլփատութիւնը նշան մըն էր, որ կը զատէր կը որոշէր Աստուածապաշտները հեթանոսներէն: «Նշանակ առ զթլփատութիւնն, կնիք արդարութեան հաւատոյն» (Հռովմ. Դ. 11):

Ուրեմն հին օրինաց արարողական գործքերը՝ սուրբ գործադրութեան նշաններ

միայն կրնանք սեպել, որովհետև անոնք
կը նշանակէին միայն Քրիստոսի նոր օրի-
նաց խորհուրդներուն սրբարար շնորհք-
ները, բայց հոգւոց փրկութեան շնորհք-
ները չէին կրնար պարգեւել. վասն զի ներ-
քին սրբարար զօրութիւնները չունէին.
այսինքն՝ հոգիները չէին կրնար սուրբը-
նել, մեղաց անէծքէն ազատելու արդա-
րութիւնը չէին կրնար տալ, յաւիտենա-
կան կենաց անմահութիւնը չէին կրնար
վաստակցընել, Հօր Աստուծոյ որդեգիր
չէին կրնար ընել, և երանական փառքը
չէին կրնար ժառանգել տալ:

Ինչպէս որ գործիքով շինված նշանը՝
թէպէտ իրմէն ՚ի զատ ուրիշ բան մը կը
նշանակէ, բայց ինքը իր նշանակած բա-
նին չինմանիր. կամ թէ ըսենք, արշա-
լոյսը թէպէտ նշան մըն է արեւին ծա-
ղելուն, ու արեւմտեան ամպը՝ նշան մըն
է անձրեւի, բայց ոչ արշալոյսը արեւի զօ-

բութիւն մը, և ոչ ամպը անձրեւին հետ
նմանութիւն մը ունի: Այսպէս ալ
ստուերական օրինաց գործքերը՝ կը ցու-
ցունէին միայն՝ Քրիստոսի ճեառն մերոյ
սրբարար խորհուրդները, բայց չունէին
այս խորհուրդներուն շնորհաց տալաւո-
րութիւնները:

Ինչպէս որ լուացման ջուրը՝ որ անով
մարմնաւոր սրբութիւն կ'ըլլար քահա-
նաներուն ձեռքովը, «Լուացի ջրով և
սուրբ լիցի» (ՂԼԹ. ԺԳ. 8), մկրտու-
թեան նշանակ էր, որով հոգեւոր սրբու-
թիւն կ'ըլլայ:

Չատկական գառլին զենումը՝ որ անոր
արիւնը Իսրայէլացւոց դռներուն ճակատը
սրսկելու հրաման եղաւ, կը ցուցունէր
հաղորդութեան խորհուրդը. բայց անով
ժամանակաւոր մահէ ազատեց անոնց անդ-
րանիկները, սակայն ասով՝ յաւիտենական
մահուանէ կը փրկւիլինք: «Եթէ ոչ կե-

ընկեր զմարմին որդւոյ մարդոյ, և արբ-
ջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յան-
ձինս» (Յօհ. Գ. 54):

Սաբեկ ծառէն վար կախված խոյը՝ որ
Իսահակին տեղը զօհ եղաւ, ֆրիստոսի
նշանակէր, որ Աստուծոյ գառնուկը ըլ-
լալովը՝ կախվեցաւ խաչափայտին վրայ
աշխարհիս փրկութեանը համար:

«Ահա աստիկ գառն Աստուծոյ՝ որ քառ-
նայ զմեզս աշխարհի» (Յօհ. ա. 29):

Ահա՛ ասոնց ամէնը նշան կ'ըսվին. ու
րովհետեւ հոգւոյ փրկութիւն չէր ելլեր
ասոնցմէ. այլ այն նոյն գործքերէն՝ նոր
օրինաց կենդանարար շնորհքները նշա-
նակված կ'ըլլային. միայն թէ՛ այն արա-
րողութիւնները թէ՛ որ արդար մարդիկ
ընդունէին. Աստուծոյ անուամբը ընդու-
նելովնին՝ Աստուծոյ տեսակ տեսակ խը-
նամքներ կ'ըլլար անոնց. ու մեղաւորները՝
Աստուածահաճոյ գործքի մը պէս ընելով

այն արարողութիւնները՝ Աստուծոյ ողորմութեանը արժանի կ'ըլլային :

Ուստի նոր օրէնքը՝ «խորհուրդ» կ'ըսվի. որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն սահմանված է հոգւոյ փրկութեան համար, և որ հարկաւ կուտայ արժանաւորներուն՝ տեսակ տեսակ սրբութեանց շնորհքներ. ըստ այնմ թէ՛ «Քանզի զըստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն» (Յբբ. Ժ. 1):



Գ Լ ՈՒՒ ԺԲ.

Ի՞նչ զօրութիւն ունին խորհուրդները:

Այս եօթն սրբարար խորհուրդներով մեր բնութեան վիճակը կը փոխվի. վասն զի մեղաւորութենէ արդարութեան կը փոխվինք. դատապարտութենէ կ'ազատինք, ու շնորհաց և փառաց ընդունակ կ'ըլլանք. եւր թողունք որ՝ տեսակ տեսակ գերբնական զօրութիւններով կը զարդարվինք այս խորհուրդներուն ներգործութեամբը:

Այս եօթն խորհուրդներուն ամէն մէկը մէկ մէկ առաքինութեան կը վերաբերին. որոնց երեքը կ'ըսվին Աստուածաբանական առաքինութիւնք, այսինքն՝ հաւատ, յոյս, սէր. ու չորսը՝ բարոյական առաքինութիւնք. որ ասոնք են. արիութիւն, արդարութիւն, խոհեմութիւն, բարեխառնութիւն:

Մկրտութիւնը սրբաբար խորհուրդ մըն է, որ կը մաքրէ հոգին սկզբնական մեղքէն. ու թէ որ մկրտվողը չափահաս է, ու ներգործական մեղք ալ ունի, զայն ալ կը մաքրէ:

Այս «Հաւատ» կ'ուզէ:

Թէ որ մկրտվողը չափահաս է, պէտք է որ Քրիստոնէական ճշմարտութիւնը դաւանի, այսինքն՝ պէտք է որ ընդունի բոլոր այն ճշմարտութիւնները, որ Առաքեալներուն տասներկու կտոր խօսքերովը կազմըված հաւատոյ հանգանակին մէջ կը պարունակվի:

Վասն զի սրբազան Առաքեալները՝ Պէնտէկոստէին օրը՝ առաջ քարոզեցին Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը, ու ետքը մկրտեցին. ինչպէս որ կը պատմըվի Գործք առաքելոցին մէջ Սրբազան Պետրոս Առաքեալին քարոզութեանը վրայ յօք, թէ՛ «Ոմանք յօժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան» (Բ. 41):

Բայց թէ որ տղայ է մկրտվողը, հերիք է անոր՝ իր ծնողացը, և կնքահօրը, և կամ մկրտող քահանային հաւատքը, որ տղային կողմանէ երաշխաւոր կ'ըլլան անոր դաւանութեանը. որոնք ետքն ալ կը պարտաւորին սորվեցնել անոր՝ հաւատոյ ճշմարտութիւնները, ու կրթել բարի վարքով: Որ հաւատայ և մկրտեսցի, կեցցէ՝ (Մարկ. Ժգ. 16):

Դրոշմը զօրացուցիչ խորհուրդ մըն է, որ կը կնքէ մկրտվածը՝ Հոգւոյն սրբոյ անջնջելի շնորհքովը:

Այս «արիութիւն» կուտայ, որով կը յաղթենք մոլութիւններուն, և յառաջ կ'երթանք առաքինութիւններու մէջ՝ Քրիստոսի քաջ զինուորներու պէս: Եւ իբրեւ լուան (Նփեսացիքն) մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի, և 'ի դնել 'ի վերայ նոցա Պաղոսի զձեռն, եկն Հոգին սուրբ 'ի վերայ նոցա. խօսէին լեզուս և մար-

դարէանային» (Գործ. ԺԺ. 6):


Հաղորդութիւնը կենդանարար խորհուրդ մըն է, որ արժանաւորներուն յաւիտենական կեանք կը բաշխէ. այս կը տպաւորէ հոգիներնուս մէջ՝ Աստուածային «սէրը», որ անով կը միանանք Քրիստոսի հետ. «Որ ուտէ զմարմին իմ, և բմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի, և ես 'ի նմա. և որ ուտէն զիս, կեցցէ վասն իմ» (Յօհ. զ. 55) :

Ապաշխարութիւնը արդարացուցիչ խորհուրդ մըն է, որով կատարեալ զղջմամբ վճարողներուն մեղքը կ'արձակվի. ու Աստուածային շնորհաց ընդունակ կըլլըի. ասոր կը վայլէ «արդարութիւնը». իբր թէ՛ ճշմարիտ ապաշխարողը Աստուծոյ օրէնքները կը մեծարէ, ու մեղաց անօրէնութիւնները կ'ատէ. «Ամենայն որ զմեզս գործէ, նաև զանօրէնութիւնս առնէ, և ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է» (Ա. Յօհ. գ. 4) :

Վերջին օճումը առողջարար խորհուրդ
մըն է, որ հիւանդներուն հոգեւոր և մարմ-
նաւոր առողջութիւն կուտայ. այս «յոյս»
կ'ընծայէ՝ Աստուծոյ ողորմութեամբը
սուրբերուն բնակարանը հասնելու հա-
մար: «Յարուսցէ զնա Տէր, և եթէ մեղս
ինչ գործեալ իցէ, թողցի նմա» (Յակ.
Ե. 15):

Կարգը հոգեւոր իշխանութեան խոր-
հուրդ մըն է. ասով կ'ըլլայ մարդը՝ խոր-
հուրդներու սպասաւոր, ու Քրիստոսի
բանաւոր հօտերուն՝ հովիւ. ասոր կը
պատշաճի «խորհմութիւնը», որ կարգը
ընդունողը լաւ կ'առաւարէ Տէր Աստու-
ծոյ ժողովուրդը, որոնք Աստուծոյ որդ-
ւոյն փրկարար արիւնովը ծախու առնը-
ված են: «Զգոյշ կացէք անձանց և ամե-
նայն հօտի, յորումեղ զձեզ Հոգին սուրբ
տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն՝ զոր
ապրեցոյց արեամբ իւրով» (Դործ. ի. 28):

Պատկը սուրբ միաւորութեան խոր-
հուրդ է, որ անով կենակից կ'ըլլան այր
և կին՝ իրարու հետ սուրբ սիրոյ միաւո-
րութեամբ կապված մնալով՝ զաւկըներ
ծնանելու համար, այս բարեխառնու-
թիւնն է՝ կուզէ. այսինքն չափ դնելու
են իրենց անկարգ ցանկութեանը, որ բո-
լորովին մարմնական պղծութեան մէջ չիկ-
նան: Զի որ ունիցին կանայս, որպէս թէ
չունիցին (Ա. Կորն. է. 29):



Գ Լ ՈՒ Խ Ժ Գ.

Ո՛վ է խորհուրդներուն հեղինակը
այսինքն սահմանողը:

Այս սրբարար խորհուրդներուն առաջին հեղինակը Հայր Աստուած է. որովհետեւ այս խորհուրդներուն օրինակը շատ կերպ բաներով ու զանազան նշաններով կը ցուցունէր մեր նախահայրերուն՝ հին օրէնքին ատենը. ու երբոր ատենը հասաւ լրացաւ. ու մարգարէները վերջացան. ու երբոր մեր փրկութեան համար սահմանված օրերը եկան հասան, ամէն այն առաջուց գրուածները սահմանեց ու հաստատեց իր փառակից Որդւոյն ձեռքովը:

«Բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք» (Եբր. ա. 1):

Ուստի խորհուրդներուն անմիջաբար հեղինակը՝ Որդին Աստուծոյ Յիսուս Քր-

րիստոս է. որովհետեւ այս ամեն շնորհա-
կան խորհուրդները ինքը բացայայտելով
աւանդեց իր աշակերտներուն՝ որը խօսքով
ու որը գործքով. անոր համար Եկեղեցւոյ
շնորհաբաշխ և սրբացուցիչ խորհուրդնե-
րուն բուն հեղինակը Յիսուս Քրիստոս է.
ըստ այնմ, թէ՛ «Շնորհք և ճշմարտու-
թիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղև»:

Արդ՝ պէտք է գիտնալ, թէ մեր Տէր
Յիսուսը ո՞ւր և ե՞րբ և ի՞նչ կերպով ը-
րաւ խորհուրդներուն սահմանադրու-
թիւնը. անոր համար վարը կը բացատ-
րենք համառօտ կերպով:

Մկրտութիւնը՝ Յորդանանու մէջ սահ-
մանադրեց. որովհետեւ ինքն Յիսուս Գալի-
լեացւոց Նազարէթէն այն տեղ գալով՝ երբ
երսուն տարու էր՝ մկրտվեցաւ Յոհան-
նէսէն. չէ թէ մաքրութեան կարօտ էր՝
որ ամէնուն որբացուցիչն է. այլ՝ որ իր
անճառելի խնարհութեամբը հաստատէ
մկրտութեան խորհուրդը:

Դրոշմին խորհուրդը իր բերնովը աւտն-
դեց յարուժիւն առնելէն ետքը՝ ըսելով
թէ՝ «Այլ առջիք զգօրուժիւն 'ի հասա-
նիլ Հոգւոյն սրբոյ 'ի վերայ ձեր, և եղիջիք
ինձ վկայք յնրուսաղէմ» (Գործ. ա. 8):

Արդարեւ դրոշմով կը զօրանանք՝ Քրիս-
տոսի ճշմարիտ հաւատքը համարձակ դա-
ւանել ամէնուն առջին, և Հոգւոյն սրբոյ
շնորհքը անով կ'իջնայ հոգիներնուս մէջ՝
անջնջելի կնիքի մը պէս:

Այս խորհուրդը պէտք է տալ անմի-
ջապէս մկրտութենէն ետքը՝ վրան ատեն
չանցունելով. որովհետեւ մեր կենարար Յի-
սուսին վրայ Հոգւոյն սրբոյ աղաւնախնդ
իջումը՝ այս խորհուրդը կը ցուցունէր.
ըստ այնմ, թէ՝ «Եւ իբրեւ մկրտեցաւ Յի-
սուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա
բացան նմա երկինք. և ետես զՀոգին Աս-
տուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, և
գայր 'ի վերայ նորա» (Մատ. դ. 16):

Հաղորդութեան սքանչելի խորհուրդը՝
 ետքի ընթրիքին մէջ սահմանեց՝ առաջ
 օրհնելով հացը ու գինին, ու ետքն ալ
 յայտնի խօսքով ըսելով՝ «Այս է մարմին
 իմ. այս է արիւն իմ»։ Եւ այս կերպով՝ քա-
 հանայադործել ապսպրեց մեզի. ըստ այ-
 նում, թէ՛ «Ձայս արասջիք առ իմոյ յի-
 շատակի» (Ղուկ. իբ. 19) :

Ապաշխարութեան զարմանալի խոր-
 հուրդը իր չարչարանքէն առաջ կատա-
 րեց բացարձակ կարողութեամբ՝ Եւ իբրեւ
 հեղինակ քաւութեան Եւ թողութեան մե-
 ղաց. ըստ այնմ, թէ՛ «Գիտասջիք եթէ
 իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի
 թողուլ զմեղս» (Մատ. թ. 6): Ու մե-
 ղաւոր կնկան ալ կ'ըսէր՝ «Թողեալ լիցին
 քեզ մեղք քո» (Ղուկ. է. 48):

Ու յարութիւն առնելէն ետքը՝ կիրա-
 կի երեկոյին երևելով աշակերտներուն, որ
 վերնատունը ժողովւած էին, տուաւ ա-

նոնց այս իշխանութիւնը՝ երբոր փչեց անոնց՝ ու ըսաւ. «Առէ՛ք Հոգի սուրբ»։ այս բանը չէր ցուցունէր Հոգւոյն սրբոյ պարգեւաց լըումը, որ Պէնտէկոստէին օրը պիտի ընդունէին։ այլ կապելու և արձակելու իշխանութիւնը կը ցուցընէր. անոր համար ան խօսքէն ետքը ըսաւ՝ «Եթէ ումեք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զուգուք ունիցիք՝ կալեալ լիցի» (Յօհ. Ի. 23)։

Այս գերագոյն իշխանութիւնը չէ թէ միայն Առաքեալներուն տրվեցաւ. այլ և անոնց բոլոր օրինաւոր յաջորդներուն ալ տարածվեցաւ. անոր համար Առաքելոց մէջ գլխաւոր երանելին Պետրոս՝ Եկեղեցւոյ ամէն երէցները իրեն պատուակից և և աթոռակից կը կոչէ ըսելով, թէ՛ «Ջերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակիցս և զվկայս չարչարանացն Քրիստոսի՝ որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ» (Ա. Պետ. ե. 1)։

Ու սուրբն Պօղոս գերերջանիկ առաքեալը՝ իր գործակից Տիտոսին արժանապատուութիւնը հրատարակելով՝ կը գրէ Կորնթացիներուն՝ այսպէս. «Բայց եթէ Տիտոսի ինչ բանք են, իմ հաւատար է և ձեր գործակից»:

Ու սուրբն Դիոնէսիոս՝ Տիմոթէոսին թուղթ մը կը գրէ այսպէս սկսելով. «Ի քահանայէ Դիոնէսիոսէ՝ առ քահանայակիցդ մեր Տիմոթէոս»:

Ասկէ կը հասկըցվի որ, ան որ իր ընտրեալներուն պատիւ և իշխանութիւնն պարգևեց, նոյն պատիւը և իշխանութիւնը անոնց յաջորդներուն ալ շնորհեց, ու այս բանը՝ իր աղօթքին մէջը յայտնի ըրաւ՝ երբոր Հօր Աստուծոյ կաղաչէր ըսելով. «Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս» (Յօհ. Ժէ. 20):

Այս բարձրագոյն իշխանութիւնը՝ Յիսուս փրկիչն մեր իր կամաւոր չարչարանքէն առաջ խօսք տրվաւ տալու՝ Առաքելոց գլխաւոր երանելի Պետրոսին. ու ասով չէ թէ անոր գլխաւորութեան բարձր պատիւը միայն յայտնի կ'ընէր, այլ անոր ճշմարիտ դաւանութեանը իբրեւ փոխարէն մը պարգեւելու պէս՝ առաջուց կ'իմացընէր անոր սա սքանչելի խորհուրդն ալ. այսինքն ըսել կ'ուզէր մեր Տէրը, թէ՛ ո՛վ Պետրոս՝ որ Առաքելոց մէջ նախապատիւ ես, դուն որ՝ իմ բոլոր աշակերտներուս կողմանէ՝ Հօր Աստուծոյ յայտնելովը՝ զիս Աստուած և որդի Աստուծոյ դաւանեցար՝ «Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ» ըսելովդ, ահա՛ ատոր փոխարէն այժմէն կը յայտնեմ քեզի այս խորհուրդը, որ միայն իմ Աստուածուն թեանս յատուկ բան մ'ըն է. «Զի ո՞վ կար է թողուլ զմեզս, եթէ ո՛չ միայն Աս-

տու ած:՝ ահա՛ այս բանը առաջուց յայտ-
նեմ քեզի: Բայց չարչարանքէս ու թաղ-
ուելէս ու յարութիւն առնելէս ետքը՝ չէ
թէ միայն քեզի պիտի պարգևեմ, այլ
բոլոր քու աշակերտակիցդ եղող Առա-
քեալներուս ալ հաւասար պիտի պարգե-
ւեմ յայտնապէս: Տայ քեզ զփականս ար-
քայութեան երկնից: զոր միանգամ կա-
պեացես յերկրի: Եղիցի կապեալ յերկինս:
Եւ զոր արձակեացես յերկրի, եղիցի արձա-
կեալ յերկինս: (Մատ. Ժզ. 19):

Այս բանին վճայօք կը երգէ Նկեղե-
ցին: «Որ խոստացար տալ զփականս արքա-
յութեան երկնից երանելւոյն Պետրոսի»:

Ու նոր կտակարանաց Տեսութեան մէջ
(Հատոր. Բ. յերես 22). այս բնաբանին
վճայօք այսպէս գրված է: «Պետրոս մեծա-
պէս գովելի գտաւ, եւ ընկալաւ զանվրէպ
խոստումն մեծի մասին պահելոյ նմա՝ ի
Տեառնէ»:

Այս մտքին վրայ են բոլոր մեկնիչները՝
և ճշմարտութեան վարդապետները :

Բայց տեսնանք ի՞նչ պատճառ կայ, որ
իր չարչարվելէն առաջ կը խոստանայ մեր
Տէրը այս իշխանութիւնը տալու, և չար-
չարվելէն ու յարուժիւն առնելէն ետքը
կուտայ իր ամէն աշակերտներուն, վասն
զի թէպէտ զանոնք ընտրելէն ետքը՝ տը-
վաւ անոնց՝ դէկեր հանելու իշխանութիւն
և գորութիւն, ու ամէն հիւանդութիւն-
ները բժշկելու կարողութիւն, բայց չի տը-
վաւ կապելու և արձակելու իշխանու-
թիւն, որովհետեւ տակաւին չարչարված
չէր. և պատճառն այս էր որ՝ ապաշխա-
րութեան փրկարար խորհուրդը՝ Քրիս-
տոսի Տեառն մերոյ չարչարանացը յատուկ
պառուղն է. որովհետեւ մեր ապաշխարու-
թիւնը միայն անով հաճոյ և ընդունելի
կ'ըլլայ Հօր Աստուծոյ առջևը:

Անոր համար խաչին վրայէն թողու-
թիւն խնդրելով զինքը խաչը հանողնե-
րուն համար՝ թողութեան յոյս կը պար-
գեւէր ապաշխարող մեղաւորներուն . զի
ճշմարիտ Որդի Աստուծոյ ըլլալով՝ Հօր
Աստուծոյ կը գոչէր, և մեզի ալ միջնորդ
հաշտութեան ըլլալով՝ կ'աղաչէր անոր,
որ ներէ՛ մեր մեղքերը:

Ուստի շատ պատշաճաւոր եղաւ՝ այս
իշխանութիւնը յարութիւն առնելէն ետ-
քը տալը . վասն զի մենք՝ մեր զղջմանը և
ապաշխարութեանը միջնորդ բռնելով մեր
կենարար Յիսուսին փրկագործ չարչա-
րանքները՝ մահը՝ ու թաղումը՝ այնպէս
կ'ընդունինք Աստուածային ներողութիւ-
նը, ինչպէս որ ինքն ալ այսպէս քարոզեց .
«Պարտ էր չարչարիլ Քրիստոսի, և յառ-
նել ՚ի մեռելոց յաւուր երբորդի, և քա-
րողել յանուն նորա ապաշխարութիւն և
թողութիւն մեղաց յամենայն ազգս»
(Ղուկ. իգ. 46):

Այս դիտաւորութեան կը նայի սուրբ
եկեղեցւոյ սա երգն ալ. «Օրհնեմք զքեզ
անսկիզբն Հայր Որդւոյդ միածնի, զոր ա-
ռաքեցեր 'ի դարձումն մոլորեալ ոչխարին.
դարձն է զմեզ 'ի մեղաց' Որդւոյ քո չար-
չարանօք» :

Սուրբ գիրքը քննողներուն՝ յայտնի է
այս ամէն ըստածները :

Վերջին օծման խորհուրդին ալ Քրիս-
տոսէ սահմանված ըլլալուն վրայ տարա-
կոյս չունինք. վասն զի Առաքեալները՝ ա-
նոր փրկագործ տնօրէնութեան ատենը կը
գործածէին այս խորհուրդը :

Ուրեմն յայտնի կ'երևայ՝ որ մեր
Տէր Յիսուսը սահմանեց այս խորհուրդը՝
երբոր կը սորվեցընէր կ'ապսպրէր անոնց՝
իրենց պաշտօնը՝ զօրութիւններ ու իշ-
խանութիւններ տալով անոնց. ինչպէս որ
ըսաւ՝ «Զհիւանդս բժշկեցէք» (Մատ. Ժ. 8) :

Թէպէտ ասով չհասկըցվիր՝ թէ ի՞նչ

կերպով կը կատարէին այս խորհուրդը՝
ծանր հիւանդներու վըայ, բայց Մարկոս
սրբազան Աւետարանիչը՝ սցսպէս կերպ ժը
ցուցունելով՝ կ'ըսէ յայտնի. «Եւ օծանէին
իւղով զբազում հիւանդս, և բժշկէին
զնոսս» (Մարկ. զ. 13) :

Ետքը եղբայր Տեառն Յակոբ Առա-
քեալին ձեռքովը հրատարակվելով՝ մտաւ
եկեղեցիներուն մէջ, ու եկեղեցւոյ սրբա-
րար խորհուրդներուն կարգը անցաւ :

Չեռնադրութեան սուրբ կարգը յատկա-
պէս Քրիստոսէն սահմանվեցաւ, որ անոր
հոգևոր իշխանութիւն կը տրվի՝ եկեղե-
ցական պաշտամունքները օրինապէս կա-
տարելու և աւետարանական քարոզու-
թեամբ հաւատացեալները հովուելու հա-
մար :

Այս խորհուրդը՝ Քրիստոսէն սահման-
վեցաւ, որ ճշմարիտ Քահանայապետ ըլ-
լալով՝ իր աշակերտները նախ՝ Առաքելա-

կան պաշտօնի մէջ աստիճանէ յաստիճան
հանելով, ետքը համբարձման օրը տարաւ
զանոնք Զիթենեաց լեռը, որ Բեթանիա
քիւղին մօտն է, ու վեր վերցընելով իր Աս-
տուածային ձեռքերը՝ օրհնեց զանոնք,
տալով անոնց զամէն Աստուածային շը-
նորհքները, և զամէն բարձր աստիճան-
ները, որ անոնք ալ նոյն կերպով իրենց
յաջորդներուն մատակարարեն այն պաշ-
տօնին շնորհքը : «Եհան զնոսա մինչև 'ի
Բեթանիա, և համբարձեալ զձեռս իւր
օրհնեաց զնոսա» (Ղուկ. իգ. 50 :

Ուստի Առաքեալը Տիմոթէոսին կը գրէ
այսպէս : «Մի անվոյթ առնել զշնորհացդ՝
որ 'ի քեզ են. որ տուաւ քեզ մարդարէութեամբ
'ի ձեռնադրութենէ երկրորդեան»
(Ա. Տիմ. գ. 14) :

Պսակը Եկեղեցւոյ խորհուրդ մըն է՝ որ
արարչագործութեան առնելը Աստուծմէ
սահմանվեցաւ մեր նախածնողաց վրայ :

վասն զի իշ Աստուածային կամօք ամուս-
նական անբաժանելի միաւորութեամբ կա-
պեց զանոնք իրարու, որ մարդկային սե-
ռը զաւկըններով աճին ու շատնան:

Ուստի Ագամ երբոր քնանալու թըմ-
րութենէ մը արթնցած՝ տեսաւ իր քովը
իւր կինը Եւան բռն իրեն նման, բնակա-
նապէս հաւնեցաւ անոր և իր մարմնոյն
մէկ կտորը լլալովը՝ սիրելով զայն, Աս-
տուծոյ ազգեցութեամբը սկսաւ մարգա-
րէանալ, ու իբր թէ Աստուծոյ կողմանէ՝
իրեն ապագայ զաւկըններուն կ'ըսէ. «Այս
այժմիկ ոսկը յոսկերաց իմոց, և մարմին
'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի
յառնէ իւրմէ առաւ. վասն այնորիկ թող-
ցէ այր զհայր իւր և զմայր իւր, և եր-
թիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին եր-
կուքն 'ի մարմին մի» (Յննդ. բ. 23):

Ու առն և կնոջ այս սուրբ ամուսնու-
թիւնը՝ Տէրն մեր Յիսուս զօրութիւն խօս-

քով կրկին հաստատեց՝ անբաժանելի միա-
ւորութեամբ իրարու հետ կապված ըլլալ-
նին վճռելու համար. «Ապա ուրեմն ոչ են
երկու՝ այլ մի մարմին. արդ՝ զոր Աստ-
ուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեցէ» (Մատ.
ԺԺ. 6) :

Աշխարհիս սկիզբէն Աստուծոյ ձեռ-
քով սահմանված այս ամուսնական սուրբ
միաւորութիւնը՝ սուրբ եկեղեցւոյ խոր-
հուրդներուն կարգը անցընել ուղելով մեր
Տէրը, Գալիլեացւոց Կանա քաղքին մէջ
հարսնիք մը գնաց, որ իր Աստուածային
մեծ վայելչութեամբը մեծ ցուցած ըլլայ
այս խորհուրդը, և մեր բանական սեռին
օրինաւոր աճմանը համար հաստատէ.
(Յօհ. Բ. 1) :

Մեծ խորհուրդ է՝ Քրիստոնէից այս ամ-
ուսնութեան խորհուրդը, որ զՔրիստոս
և զԵկեղեցին կը ցուցունէ՝ ինչպէս որ
առաքեալը կ'ըսէ՝ (Եփես. Ե. 32) :

Այսինքն կը նշանակէ Քրիստոսի ու
Նկեղեցւոյ մէջ տեղ եղած այն հոգեւոր
միաւորութիւնը, վասն զի Նկեղեցին սուրբ
կոյտ՝ և անարատ հարս մըն է. և իր ան-
մահ և երկնաւոր փեսան՝ Քրիստոս է, որ
զայն իր մարմնոյն պէս կը սիրէ, և իր
բարերար խնամքներովը կը անուշանէ, և
իր անմահ մարմնոյ և արեան կենդանա-
ցուցիչ խորհուրդովը կը կերակրէ, ու
կը զարգարէ զանազան պարգևներով ու
փառքերով (Նփես. ե. 29) :

Այսպէս կը սրարտաւորի ամէն մարդ իր
մարմնոյն պէս սիրել իր օրինաւոր կիներ,
և հոգ տանիլ անոր վրայ, ամուսնական
իրաւունքով խնամել զայն, և ներել անոր
բնական տկարութեանը. ու կիներն ալ
պէտք է որ մեծարէ իր այրը՝ ամէն կեր-
պով անոր հնազանդ ըլլալով. ու վախ-
նալով իր այրէն՝ իբր թէ խնամածու
Տէրոջմէ մը վախնալու պէս (Նփես. ե. 33) :

Մեծ է այս խորհուրդը՝ Քրիստոսի շնորհական օրինաց մէջ, որովհետեւ Քրիստոնեայ առն և կնոջ՝ իրարու հետ ունեցած ամուսնական միութիւնն է որ՝ կ'աճեցնէ հաւատացեալները, ու Աստուծոյ շնորհունակ որդիներ կը շատցնէ։ (Գաղ. 27)։

Ինքնիրեն ալ բնականապէս մեծ և սքանչելի է այս ամուսնութեան խորհուրդը, որովհետեւ երկու իրարու անձանօթանձեր՝ սիրոյ պինդ կապով մը այնպէս կը կապվին իրարու հետ, որ մինչև անդամ կը մոռնան իրենց ազգականները՝ բարեկամները՝ մօտիկ ծանօթները՝ ու ան որ դարմանալու բան է, իրենց ծնողքն ալ կը մոռնան։

Գաղտնածածուկ ոգեխառնութիւն մըն է այս՝ մեր բնութեանը մէջ պահված, և վերին արարչական տեսչութեանը մէկ մեծ խորհուրդն է, որով մարդոյ ծնունդը կ'աճի օրինաւ որ միաւորութեամբ մը։

Արդ՝ թէ որ կին մը կամ այր մարդ մը կը
խոտորի կը ծռի այս օրինաւոր ամուսնու
թեան մէջ՝ որ Տէր Աստուած սահմանած է,
կամ թէ կանոնաւոր ամուսնութենէ դուրս՝
ազատ ազատի հետ պղծութիւն կ'ընեն,
և կամ թէ մէկը օտար կարգը վածի մը հետ
գէշութիւն կ'ընէ, այնպիսիները շուն ու
պոռնիկ կ'ըսվին. մանաւանդ թէ՛ ամուս-
նական հաւատարմութիւնը աւրոյ, և Աս-
տուածային բարեկարգութեան հակառակ.
որով ոչ թէ միայն բարի մարդոց կ'անարգ-
վին ու երեսէ կ'իկնան, այլ Աստուածային
շնորհքներէն ու փառքերէն ալ կը զրկը-
վին՝ Աստուծոյ ահեղ դատատանին դա-
տապարտութեանը տակ իկնալով: «Պատ-
ուական է ամուսնութիւն և սուրբ են
անկողինք. բայց զշուն և զպոռնիկս դա-
տի Աստուած» (Եբր. Ժգ. 4):



Գ Լ ՈՒԽ Ժ Դ

Խորհուրդներուն զանազանութիւնը :

Եկեղեցւոյ խորհուրդներէն ոմանք հարկաւոր են ամէնուն, ու ոմանք հարկաւոր չեն ամէնուն, ոմանք կրկնկնրվին, ոմանք չեն կրկնրվիր, որոնք պէտք է որ գիտնանք ու ճանչնանք:

Մկրտութիւնը ամէնուն հարկաւոր է սկզբնական մեղքէն ազատվելու ու Աստուածային հանդերձեալ փառքին ժառանգաւոր ըլլալու համար:

Այս չկրկնրվիր, որովհետեւ մկրտութեան խորհուրդը Քրիստոսի Տեառն մերոյ կենսաձիր մահուանը յատուկ օրինակն է:

Ուստի մկրտութեան ատեն՝ երեսայն երեք անգամ ջուրը ընկղմելնիս՝ մեր փրկչին երեք օր թաղված մնալը կը նշանակէ, վասն զի մկրտութեան խորհուրդով՝

Քրիստոսին խաչը ելլելուն և մեռնելուն
կցորդ կ'ըլլանք, և անով իր փառքին ալ
ժառանգակից :

Ուրեմն ինչպէս որ անհնար է՝ որ Քրիստոսն որէն խաչվի ու մեռնի, այնպէս ալ՝
անգամ մը մկրտվողին անհնար է կրկին
մկրտվիլ, որ մտածելն ալ ծանր մեղք է :

«Եթէ ոչ գիտէք, զի որ միանգամ մը
կրտեցայք՝ ՚ի Քրիստոս Յիսուս՝ ՚ի մահ
անդր նորա մկրտեցայք, թաղեցայք ընդ
նմին մկրտութեամբն ՚ի մահ, և այլն» Հը-
ռովմ. գ. 3) . և (Եբբ. գ. 4) :

Դրոշմը հարկաւոր է ամէն մկրտեալ-
ներուն, որ զօրանան Հոգւոյն սրբոյ շնորհք-
ներով, ու սատանային հնարքներուն գէմ
արիանան. և աս ալ անկրկնելի է. «Քանզի
անգեղջ կն շնորհք և կոչումն Աստուծոյ»
(Հռովմ. ժա. 29) :

Յիսուսի փրկչին մերոյ կենարար մար-
մնոյ և արեան հաղորդութեան խորհուր-

դը՝ կատարեալ զղջմամբ մեղքերէն հրա-
ժարված ամէն ֆրիստոնէից հարկաւոր է՝
Յիսուսի ֆրիստոսի սրբութեանը հաղոր-
դակից ըլլալու համար • և այս կրկնը-
վելու խորհուրդ է : «Քանիցս անգամ թէ
ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմ-
պիցէք, զմահ Տեառն պատմեցէք, մինչև
եկիսցէ նա» (Ա. Կորն. Ժա. 26):

Ապաշխարութիւնը հարկաւոր է ներ-
դործական մեղաց մէջ ամէն ինկոդներուն,
որ սրտով զղջան. ու խղճմտանքով ետ կե-
նան մեղքերէ, ու բարի գործքերու հե-
տեին, ու քահանային առջևը կատարեալ
խոստովանութեամբ՝ հասնին Աստուածա-
յին ներողութեան • այս խորհուրդն ալ
կրկնելի է : «Տէր՝ քանիցս անգամ եթէ
մեղիցէ ինձ եղբայր իմ՝ և թողից նմա.
մինչև ցեօթն անգամ : Ասէ ցնա Յիսուս,
ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ,
այլ մինչև ցեօթանասներկին եօթն» (Մատ.
ԺԸ. 21):

Արջին օժման խորհուրդը՝ որ կարգաւորներուն աղօթքովը կը կատարվի, հարկաւոր է ծանր հիւանդներու վրայ՝ ցաւերուն թեթեւութեանը ու բժշկութեանը, յանցանքներուն ներողութեանը և հոգիներուն դիւրաւ Աստուծոյ տեսութեանը հասնելու համար, որ է մէկ հատիկ վախճան երանական :

Այս խորհուրդը այնչափ շատ հարկաւոր է ամէնուն՝ այն միւս խորհուրդներուն պէս, որ միայն անոնցմով կ'ըլլայ հոգւոց փրկութիւնը, ու Աստուածային երանութեան և յաւիտենական փառաց ժառանգութիւնը :

Այս խորհուրդն ալ կրկնելի է, և շատ ծանր հիւանդներուն պէտք է՝ թէ որ ժամանակը՝ տեղը և ուրիշ պարագաները ներեն :

Առաքեալը այսպէս կը պատուիրէ. «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ զերի-

ցունս Եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ
նորա աղօթս. օծցեն իւղով յանուն Տեա-
ռին, և աղօթքն հաւատովք փրկեսցեն
զաշխատեալն. և յարուսցէ զնա տէր, և
եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա»
(Կաթու. Յակ. ե. 14):

Թէ որ ձեզնէ մէկը փնասակար հիւան-
դութ իւնով հիւընդնայ կ'ըսէ՝ որ անկէ
բժիշկները ձեռք քաշեն, պէտք է հոգևոր
բժիշկներ կանչել, որոնք կարօտ չեն խո-
տերու և արմատներու լեղի դեղերուն, այլ
անոնց բժշկութեան ազդու դեղը՝ ջեր-
մեռանդ գիտաւորութեամբ եղած ա-
ղօթքներն ու խնդրուածքներն են. ինչ-
պէս որ կը վկայէ մեր Սարգիս շնորհալին.
«Ձճմարիտ բժիշկն Յիսուս 'ի կարիս հի-
ւանդին խոնարհեցուցանեն»:

Իրաւ իրաւ՝ ինչ սքանչելի դօրու-
թիւն ունի արժանաւոր մաքրասիրտ հո-
գևոր մարդոց աղօթքը. «Ձի աղօթքն հա-

ւատովք՝ (կ'ըսէ առաքեալը) փրկեացեն
զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր:

Այս բնաբանին մէջ՝ սուրբ վարդապետն մեր շնորհալին Սարգիս բացայայտ
կ'ըսէ. «Եթէ ոչ իւղն ինչ տայր զառող-
ջութիւն հիւանդին, այլ՝ անուն Տեառն»:

Մանաւանդ որ՝ խորհուրդներուն հեղինակը Յիսուս՝ այսպէս աւանդեց այս
խորհուրդը Առաքեալներուն՝ ըսելով թէ,
«Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշ-
կեացին» (Մարկ. Ժգ. 18):

Ուստի սրբազան Առաքեալները երբեմն
Տէր Յիսուսի անունովը կը բժշկէին հիւ-
ւանդները, ու երբեմն ձեռք գնելով վը-
րանին: «Յանուն Յիսուսի Քրիստոսի նա-
ւա՛րեցւոյ արի՛ և գնա՛» ըսին 'ի ծնէ կաղին
(Գործ. 4. 6): «Եւ եղև հօրն Պապղեայ 'ի
ջերմն և յախտ թանչից հիւանդանալ՝
զնել. առ որ մտեալ Պօղոս՝ և կացեալ յա-
ղօթս՝ եդ զձեռն և բժշկեաց զնա» (Գործ.
իւր. 8):

Իսկ Առաքեալներէն ոմանք խորհելով
որ՝ իսրայէլացւոց ազգին մէջ մարգարէ-
ներուն ատենէն սովորութիւն կար սուրբ
իւզ ունենալու՝ և յարգանքով պահելու,
որ անով կ'օծէին Աստուծոյ նուիրվելու-
ները, և այն իւղերուն մէջ անուշահոտ և
սուղ իւղեր ալ կը դանձվէր. (Ա. Թագ.
Ժգ. Սաղմ. ձր. 18: Յօհ. Ժբ. 3):

Անոր համար երբեմն ալ իւղով կ'օծէին
հիւանդները, և այնպէս կը բժշկէին. բայց
զօրութիւնը անոնց աղօթքներով, և Յի-
սուս Քրիստոսի անունովը կ'ըլլար:

Ուստի հիւանդներուն խիստ կարևոր
է սրբակրօն կտրուաւորաց աղօթքը՝ ձեռք
դնելով վրանին, ինչպէս որ մեր Տէր Յիսուսն
ալ վճռելով պատուիրեց շեռս դնել 'ի
վերայ հիւանդաց:

Բժշկութեան շնորհքը՝ որ պարզե-
կ'ըլլայ հաւատացեալ հիւանդներուն, ոչ
ձեռք զնոյնն է, ու ոչ ալ աղօթողին,

այլ Յիսուս Քրիստոս երկնաւոր բժշկաւ
սկսալին:

Իսկ պաշտօնասէր և սրբակրօն քահա-
նաները նոյն շնորհքին սպասաւորներ են,
որ իրենց արժանահայց աղօթքովը ու խն-
դրուածքովը արժանաւոր և ընդունակ
շնորհաց կ'ընեն հաւատացեալը:

Ուրեմն այս բժշկութեան խորհուրդը՝
անշուշտ կրնայ կատարվիլ հիւանդներուն
վրայ՝ սուրբ խաչի տառնադրութեամբ
այլ՝ աղօթքով ալ, որ յաճախ ընել կուտան
մեր Զերմեռանդ և հոգեւէր ազգը՝ իրենց
վտանգաւոր հիւանդներուն վրայ, քահա-
նայ կանչելով և հաւաքով՝ աղօթք և
բժշկութեան տւեստարանի ընթերցմունք
խնդրելով. և յատկապէս աս է՝ այս խոր-
հուրդին վայելուչ կերպով կատարումը՝
Եկեղեցւոյ առաջին դարերէն 'ի վեր մե-
ծարված. որ աս բանին վրայ իրաւամբ
կը դրէ Հայր Գաբրիէլ՝ Պօղոսի թղթոց

Վեհնութեան մէջ՝ (Հատոր. Ա. Թղթահա-
մար 910) : «Այլ երբեմն դնելով զձեռն
'ի վերայ աստացելոց որպէս Տէրն խոս-
տացաւ» (Մարկ. ԺԳ 18):

Եւ բազում անգամ աղօթիւք և տեառ-
նագրութեամբ խաչի. որ է արարողու-
թիւն 'ի կիր արկեալ յառաջին դարուց
Յկեղեցւոյ :

Տես որ՝ Յիսուսի ամենահար զօրու-
թիւնը՝ կարող է Պօղոս առաքեալին թաշ-
կինակովն ալ հիւանդներու վրայ հրաշք
ընելու. նոյն հիւանդին և անոր վրայ ա-
ղօթք ընողին հաւատքին նայելով. ինչ-
պէս որ գրած է Գործոցին մէջ (ԺԺ. 11):

«Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր
Աստուած 'ի ձեռն Պօղոսի. մինչ զի և 'ի
հիւանդս տանիլ. 'ի քրտանէ նորա թաշ-
կինակս կամ վարչամակս, և մերժել 'ի նո-
ցանէ աստիցն, և այսոց չարաց ելանել» :

Չեւնագրութեան խորհուրդը՝ որ քա-

Հանայական կարգին եօթն աստիճան իշխանութիւնն է, հարկաւ որ է անոնց համար, որ կոչված ու ընտրելիւ են սրբարար խորհուրդներուն սպասաւորութեանը և պաշտօնին համար, և հոգեւոր հովուութեան համար, որով Աստուածային սուրբ խորհուրդներուն հոգեւոր անտես կը կարգի ձեռնադրեալը, ու արթուն և քաջ հովիւ կ'ըլլայ, որ ճշմարիտ հովու ապեաին Քրիստոսի բանաւոր հօտը Քրիստոնէական ողջամիտ վարդապետութեամբ խնամէ, և բարի վարուց առաջնորդէ զանոնք:

Այս խորհուրդն ալ չի կրկնելիր նոյն մարդուն վրայ, որ անգամ մը ընդուններ է այս շնորհքը:

Մի անփոյթ առններ զշնորհացդ՝ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան. յայդ խորհանց և 'ի դոյն կանխեօջի՛ր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի» (Ա. Տիմ. դ. 14):

Կ'ուզէի այս տեղ քահանայութեան այս
հոգեւոր բարձր աստիճանին հարկաւոր և
օգտակար վանազան խրատներ ու յորդո-
րանքներ քաղել Աստուածային սրբազան
գիրքերէն, ու սուրբ հայրերուն նուիրել՝
անմահ կենդանութեան ուղեցոյցի մը պէս,
բայց աղէկ նկատեր եմ, որ մեր սրբազան
Ներսէս շնորհալի հայրապետին Աստուա-
ծաշնորհ և վսեմ խրատաբանութիւնները
և յորդորակները՝ զոր նուիրած է Նպիս-
կոպոսաց և Քահանայից սրբազան դասուն,
շատ ազդու և բաւական խրատներ, և
ամէն մէկ աստիճանաւորներու յարմար և
վայելուչ յորդորակներ են :

Որ եթէ աստիճանաւորներէն մէկը ա-
չալուրջ մտօք կարդայ զանոնք, և իր գործ-
քերը նոյն Աստուածաշնորհ խօսքերուն
յարմարցընէ, 'ի հարկէ հլեշտակաց ա-
նարատութիւնը կ'ըստանայ՝ անվրէպ ու
անդատաւարտ մնալով իր պաշտօնին մէջ:

Ուստի նորին այս հոգեւոյս խօսքերուն վրայ՝ մեր քովէն կրկին յորդորանքներ ու խրատներ եկեղեցիներ անպատշաճ սեպելով Պօղոս սրբազան Առաքելոյն միայն այն խօսքը ձեռք առինք, որով Եկեղեցւոյ պաշտօնասէր հոգարարձուներուն երկու տեսակ վարձքի արժանաւոր բլլալին կը յայտնուի: «Որ բարւոք վերակացու լինին երիցունք, կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ» (Ա. Տիմ. ե. 17):

Պատկը Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որով այր և կին երկու կողմէն սրտի հաւճութեամբ և յօժար կամքով կը կապվին իրարու հետ օրինաւոր և սուրբ ամուսնութեան համար:

Այս ազատարար հարկաւոր է ամէնուն, աշխարհիս մէջ բնականապէս վարվելու համար, բայց պէտք է Աստուածաշին վճռով անբախտելի մնալ կենսիցս:

Թեան անարատ սիրոյն մէջ, և երկուքը
 իբրեւ մէկ մարմին՝ միաւորիկ իրարու հետ
 բարոյական և օրինաւոր միութեամբ, զաւ-
 կըններ ծնանիկ, իրարու օգնականութեամբ
 մեծցընել զանոնք, բարի վարուց և Աս-
 տու ածալաշտութեան մէջ կրթել, և զա-
 նազան առաքինութեան օրինակ բլբլով
 իրենց զաւկըններուն, որ այս բանը անժխ-
 տելի և հարկաւոր պարտք մըն է հայրե-
 րուն և մայրերուն :

Ուստի ամուսնական և օրինաւոր միա-
 ւորութեամբ՝ այր և կնոջ իրարու հետ
 մէկտեղելը բարի է. որ անոնցմէ՝ մարդոց
 սերունդին շարունակ աճմանը համար
 զաւկընէր կը բուսնին : «Ո՛չ է բարւոք
 մարդոյդ միայն լինել. արասցուք դմա օգ-
 նական ըստ դմա» (Յննդ. բ. 18) :

Ձի եթէ ամուսնանայցես, ո՛չ մեղար, և
 եթէ ամուսնանայցէ կոյսն, ո՛չ մեղաւ.
 բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այն-

պիտիքն, այլ ես խնայեցի 'ի ձեզ» (Ա.
Կորն. է. 28) :

Երկրորդաբար ամենուն ալ հարկաւոր
է բնականապէս՝ այս ամուսնութիւնը, որ
չըլլայ թէ պոռնկութեան չար ախտից
մէջ իկնան. զի ան որ չկրնար ողջախոհո-
ւթեամբ յաղթել իր ցանկութեան անօթ ի
բաղձանքները, թող զսպէ՛ ինքըզինքը օ-
րինաւոր ամուսնութեամբ : «Բայց վասն
պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին
կալցի՛. և իւրաքանչիւր ոք կին՝ զիւր այր
կալցի» (Ա. Կորն. է. 2) :

Այս խորհուրդն ալ կրնայ կրկնուիլ ա-
մուսնացեալներուն վրայ՝ թէ որ երկուքին
մէկը մեռնի. վասն զի առն և կնոջ այս ա-
մուսնական կապը՝ անկարելի է որ ուրիշ
բանով մը քակվի. բայց միայն երկուքէն
մէկուն մեռնելովը : «Քանզի կին առնակին
'ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք.
խակ եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրի-

նաց առն : Ապա ուրեմն, մինչ կենդանի է
այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն այլում,
և եթէ մեռցի այրն՝ ազաա է յօրինացն՝
չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այ-
լում, (Հռոմ. է. 2. 3) :

Ասկէ 'ի զատ՝ կարգը վաճները ամուս-
նական պարտքերնին իրարու վճարելու
պարտական են մշտնջինապէս. որովհետեւ
ամուսնական օրինօք իրարու իշխանու-
թեան տակ են, և կը տիրեն իրարու վրայ.
ու ազատ չեն, այլ իրարու ծառայ՝ որ
չափ ատեն որ կը տիրէ անոնց վրայ ա-
մուսնական միութեան օրէնքը. (Ա. կորն.
է. 3. 4) :

Յօժար կամքով կը կապվին իրարու հետ՝
ամուսնանալու ատեննին, և ակամայ կը
պարտաւորին իրարու տկարութեանը օգ-
նել՝ աշխարհիս զանազան բերմունքներուն
մէջ :

Թէ որ զաւակներ ծնանին, շատ տա-

ռապանքներ ու կերպ կերպ ցաւեր. թէ որ
զաւկի մահ պատահի, լաց ու սուգ և
արտամութիւն՝ կ'այրէ կը լափէ սրտերնին :
Թէ որ անճնունդ ըլլան, ո՞րչափ հոգ ու
ցաւ կ'ըլլայ իրենց՝ որ այն ամուսնական
վիճակին մէջ անմխիթար մնացին :

Թէ որ շատ զաւկրներ ունենան, ո՞րչափ
աշխատանք ու հոգ պէտք է, որ զանոնք
աղէկ պահեն՝ մեծցընեն՝ ու կրթեն :

Թէ որ բարքերնին իրարու յարմար պա-
տահի, ու մէկզմէկու վրայ բուզն սրտով
ցաւակից ըլլան, ալ պէտք չէ անոնց ու-
րիշ հանգստութիւն մը՝ մխիթարութիւն
մը. բայց թէ որ ասոր հակառակ՝ պատա-
հի որ բնութիւննին չվարվող՝ բարքերնին
անզգամ և վարքերնին չար ու մոլի ըլլայ,
ալ չկայ անոնց անկէ ետեւ մխիթարու-
թիւն մը. օլ է օր իրարու մեռնելուն կ'ըս-
պասեն. ծովու ալիքներու պէս անտանելի
տառապանքներու մէջ տակ ու վրայ կ'ըլլան

միշտ. և ան ատենը արժան է որ, անոնց բնակարանը՝ ցաւերու հոգերու տուն ըսվի:

Ահա՛ ամուսնական կեանքին այսքան ծանրութիւններուն վրայ, ու այսքան դժուար և անտանկէ տառապանքներուն վրայ տարակուսելով՝ սրբազան Առաքեալները՝ համարձակեցան Տէր Յիսուսին ըսելու թէ՛ «Եթէ այդպէս ինչ փնաս իցէ ընդ այր և ընդ կին՝ լաւ է չամուսնանալ» (Մատ. ԺԺ. 10) :

Անոր համար Տէրն մեր Յիսուս ալ վեր կը վերցընէ անոնց միտքը աշխարհիս բազմահոգ ալէկոծութիւններէն, ու Աստուծոյ ազատարար օգնականութեանը ապաւինել կուտայ զանոնք, որ է կուսութեան վիճակը. որ անոր մէջ գտնելովոր՝ Աստուծոյ շնորհաց օգնականութեամբ լցված՝ կրնայ ուժ տալ իր անձին, ու միայն Աստուծոյ պաշտօնը անգրաղ մտքով կատարելը մըտմտալ, ու մարմնոյ չար բաղձանքները յաղ-

Թել, ու երկնից արքայութեան երանու-
թեան պսակը առնել:

Անոր համար այս պատասխանը տը-
վաւ իր աշակերտներուն. «Ո՛չ ամենեքեան
բաւական են այդմ բանի, այլ որոց տուեալ
է. և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց
արարին ներքինիս վասն արքայութեան
երկնից. որ կարողն է տանիլ՝ տարցի» (Մատ-
թ. 11. 21):

Երանի՛ անոր՝ որ յօժար սրտով կը պա-
հէ այս հրեշտակային կրօնը՝ աշխարհիս
ունայն վայելմունքներէն ետ քաշվելով, ող-
ջախոհութեամբ համբերելով, և մարմնա-
կան զէշ ցանկութիւններ արթնցընող բո-
լոր չար բաղձանքները իրմէն վաւրնտելով,
ու իր միտքը ժամանակաւոր մոմըտութե-
անէ ազատ պահելով՝ պատրաստ կը մնայ
միայն Աստուծոյ կամքին ծառայելու, և
կենարար Յիսուսէն չի զատվելով միշտ ա-
նոր հետեւելու, և միայն անոր ուզածները

կատարելով անոր ճառայելու. ինչպէս որ
յայտնի կը ցուցունեն այս վկայութիւնն
ները : «Եւ ամենայն որ ոք եթող զտուն՝
կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ
զմայր՝ կամ զկիւն կամ զորդիս կամ զա-
գարակս վասն անուան իմոյ, հարիւրա-
սպատիկ առցէ և զկեանս յաւիտենականս
Ժառանգեսցէ» (Մատ. ԺԺ, 29) :

«Այլ կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ
անկինն է, հոգայ զՏեառն՝ թէ որպէս
հաճոյ լիցի Տեառն. և որ կանամբին է,
հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լի-
ցի կնոջ իւրում» (Ա. Կորն. է. 32) :

Արդ՝ թէ որ մէկը կ'ուզէ էվելօք աղէկ
հասկընալ կուսութեան գերազանցութիւն-
նը, Ոսկեբերանի կուսութեան ճառերը թող
կարդա՛, որ աս բանին վրայ շատ ընդար-
ձակ կը խօսի այն երանելին :

Իսկ մենք՝ ամէն մէկուն կոչումը Աս-
տուծոյ կը թողունք. թէ՛ Աստուծոյ կամ

քովը ամուսնացած աշխարհականներունը
 և թէ՛ Աստուծոյ պաշտամանց հոգևոր
 սպասաւորութեանը համար՝ յօժար կա-
 մօք աշխրջէս հրաժարուած կոյսերունը .
 վասն որոյ՝ սրբազան Պօղոս Առաքեալին
 վկայութեամբը կը լըմնցընենք մեր խօսքը,
 թէ՛ «Իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի
 յԱստուծոյ. ոմն այսպէս և ոմն այնպէս»
 (Ա. Կորն. է. 7) :

Ուստի ամէն կերպով Աստուծային շը-
 նորհացը յանձնենք ինքըզինքնիս՝ անոր
 ներքին կոչմանը հնազանդելով : Արթուն
 մտքով՝ կենդանի հաւատքով՝ և մաքուր
 սրտով՝ պինդ բռնենք աւետարանական և
 առաքելական ողջամիտ վարդապետութիւն-
 ները, և սրբազան աւանդութիւնները
 մտքերնուս գանձարանին մէջ անկողնապսելի
 գանձերու պէս պահելով :

Ու մեծ զգուշութեամբ պահպանենք
 մեր հոգին, որ չըլլայ թէ՛ չար ու խորատ-

մանկ գլխէ հանող մը՝ հոգեկորուստ խա-
բէութեամբ կորստեան որոգայթը ձգէ
զմեզ, մտքերնուս մէջէն յափշտակելով բա-
րի խորհուրդները, և Քրիստոնէական սրբա-
րար շնորհքները աւելելով վրանուս՝ ու պէս
պէս մտադածին զըուցվածքներով մեզ զա-
նազան աղանդներու մէջ մոլորցընելով Քր-
իստոնէական ճշմարիտ վարդապետու-
թեան հակառակ :

Վասն որոյ ամէն ըսածներէս ետքը՝
Առաքեալին սա խօսքը գրել վայելուչ կը
սեպեմ բոլոր մտքերու զգուշութեան հա-
մար, որ հաստատ կենան այն նոյն ուղղա-
փառ և ճշմարիտ հաւատքին մէջ, որն որ
սորվեցանք մեր կենարար Յիսուսին Աւե-
տարանի շնորհապարգև խօսքերէն, և որ
սուրբ Առաքեալներէն քարոզվեցաւ, և որ
նոյնը սուրբ Հայրապետներէն անսխալ բա-
ցատրեցաւ :

«Չգոյշ լերսւք՝ մի՛ ոք իցէ՝ որ զձեզ կո-
ղոպտիցէ ճարտարմտութեամբ և սնոտի
խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւան-
դութեան՝ և ըստ տարերց աշխարհիս, և
ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի» (Կողոս. բ. 8):



ՅԱՆԿ ԳԼԽՈՑ



Ա. Ի՞նչ է Եկեղեցին	11
Բ. Երբ եղաւ Եկեղեցիին սկիզբը	14
Գ. Ինչո՞վ կը զանազանի հին Եկեղեցին նոր Եկեղեցիէն	19
Գ. Եկեղեցին երեք կերպ է	35
Խ. Քրիստոսի Եկեղեցւոյն շնորհքները	43
Զ. Ի՞նչ է շնորհքը	48
Է. Քանի՞ տեսակ է շնորհքը	54
Ը. Քանի՞ տեսակ է ներքին շնորհքը	59
Թ. Աստուծոյ շնորհքները ընդունելու ջանք եւ հոգ րնել պէտք է	68
Ժ. Ի՞նչ ինչ են՝ Քրիստոսի Եկեղեցւոյն յատուկ նշան- ները	79
ԺԱ. Եկեղեցւոյ եօթն խորհուրդները	109
ԺԲ. Ի՞նչ զօրութիւն ունին խորհուրդները	115
ԺԳ. Ո՞վ է խորհուրդներուն հեղինակը այսինքն սահ- մանողը	121
ԺԴ. Խորհուրդներուն զանազանութիւնը	139

1884

1884

1. The first of the year was a very cold day.
2. The second day was a very cold day.
3. The third day was a very cold day.
4. The fourth day was a very cold day.
5. The fifth day was a very cold day.
6. The sixth day was a very cold day.
7. The seventh day was a very cold day.
8. The eighth day was a very cold day.
9. The ninth day was a very cold day.
10. The tenth day was a very cold day.
11. The eleventh day was a very cold day.
12. The twelfth day was a very cold day.
13. The thirteenth day was a very cold day.
14. The fourteenth day was a very cold day.
15. The fifteenth day was a very cold day.
16. The sixteenth day was a very cold day.
17. The seventeenth day was a very cold day.
18. The eighteenth day was a very cold day.
19. The nineteenth day was a very cold day.
20. The twentieth day was a very cold day.



1863

Գինն է 30 կուպ. արծաթ.

